# ԳԱՎԱՌ

## համայնքի հնգամյա զարգացման ծրագիր



## Բովանդակություն

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ 5

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

**2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6**

**2.2. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 6**

**2.3. ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ 9**

**2.4. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ 9**

**2.5. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 9**

**2.6. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9**

**2.7. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9**

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 11

**3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ՝ 2022թ. 11**

**3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ 11**

**3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ 12**

**3.4. ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԲՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ 12**

**3.5. ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ, ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 19**

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳԱԼԻՔ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 22

**4.1. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ 23**

**7.2. ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 36**

**4.2. ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 37**

**4.3. ՀԱՐԵՎԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՂ ԳԱԼԻՔ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 37**

**4.4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 37**

**4.5. ՏԵՂԱՑԻ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ 39**

4.6. ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ԾՐԱԳՐԵՐԸ, ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 39

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ 40

Համայնքի բյուջեի եկամուտները եւ 40

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ 40

6. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 41

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ 41

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԿԱ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍԻ ԹԵՐԶԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 42

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՈՉ ՌԱՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍԱԿԱՎՈՒԹՅՈՒՆԸ 42

ՄԻՋՔԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՆԲԱՐԵԿԱՐԳ ՎԻՃԱԿԸ 42

ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՋՐԱԳԾԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ՋՐԱԳԾԵՐԻ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 43

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԻ ՄԱՇՎԱԾ ՎԻՃԱԿ 43

ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ 43

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԻՉ ՔԱՆԱԿԸ 43

7. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 44

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՍ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 44

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՍ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ 45

8. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ 50

8.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ 50

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ՝ 50

ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝ 51

8.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՆԵՐԸ, ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ 51

9. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ 52

10. ՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 66

11. ՀՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ՊԼԱՆ 66

11.1. ՀՀՁԾ–ՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՆՄՈՒՇ 66

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

ԳԱՎԱՌ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԳԵԼԻ՛ ԲՆԱԿԻՉՆԵՐ

Գավառ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթուղթն է, որը նախատեսում է առաջիկա հինգ տարիների համար խոշորացված համայնքի խնդիրների արդյունավետ լուծում եւ նպատակային գործընթացի իրականացում: Հնգամյա զարգացման ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով ազգաբնակչության կարծիքը, համայնքի առկա հիմնախնդիրների առաջնահերթությունը եւ ֆինանսատնտեսական ռեսուրսների գնահատման մակարդակը: Բոլորս էլ քաջ գիտակցում ենք, որ մեր քաղաքում դեռ շատ անելիքներ կան, որպեսզի այն դառնա զբոսաշրջության տարածաշրջանային կենտրոն՝ մաքուր, բարեկարգ, զարգացած ենթակառուցվածքներով, որտեղ բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ, փոքր եւ միջին ձեռնարկատիրությամբ, վերամշակող արտադրությամբ:

Գավառ համայնքում հիմնական խնդիր է հանդիսանում աշխատատեղերի բացակայությունը, որից էլ բխում են սոցիալ – տնտեսական մյուս հիմնախնդիրները: ՀՀԶԾ-ն իր մեջ ինչ-որ չափով ներառում է նաեւ այնպիսի բաղադրիչներ, որոնց գործարկման դեպքում հնարավորություն կընձեռնվի առաջնորդող գաղափարներով նկատելիորեն նպաստել խնդրի լուծման խոչընդոտների վերացմանը:

ՀՀԶԾ-ը ենթադրում է նաեւ 2022-2026 թվականի բյուջետային ծրագրերն իրականացնելիս՝ որոշակի ռեսուրսներ ներդնելու դեպքում արդյունքների ձեռքբերում, միաժամանակ արմատավորելով նոր որակի եւ մակարդակի կառավարում, ձեւավորելով ներդրված ռեսուրսների եւ ստացված արդյունքների միջեւ ինտեգրացված կապ, ապահովելով բյուջետային ծրագրի միջոցառումների ու գործողությունների կատարման թափանցիկությունն ու վերահսկման արդյունավետ մեխանիզմը:

Սա հնարավորություն է տալիս համայնքի զարգացման հնգամյա ծրագրի (ՀԶՀԾ) հիման վրա պլանավորել համայնքի առկա ֆինանսական միջոցները, դրանք օգտագործել խնայողաբար, արդյունավետ եւ հրապարակային:

Կարեւորելով մասնակցային գործընթացները տեղական ինքնակառավարման համակարգում, (ՀՀԶԾ) այս ձեւաչափով ամրագրվում է հաշվետվողականությունը, շարունակականությունը, ծրագրերի եւ խնդիրների կատարման առաջնահերթությունների հստակ սահմանումը, բյուջետավարման գործառույթների հստակ վերաբաշխումն ու չափելիությունը:

Որդեգրելով աշխատանքային նոր ռազմավարություն, ՀՀԶԾ-ով առավել կարեւորվում են բնակչությանը համայնքային ծառայությունների արդյունավետ մատուցումը եւ համայնքի խնդիրների աստիճանական լուծումը:

Այս բաղադրիչներով ներառյալ Գավառ համայնքի Հնգամյա զարգացման ծրագիրը կնպաստի բնակչության բարեկեցության բարելավմանը, մատաղ սերնդի դաստիարակմանը եւ մեր համայնքի ներդաշնակ զարգացմանը:

Ծրագիրը իրենից ենթադրում է այնպիսի փաստաթուղթ, որում ընդգրկվում են համայնքի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներ, որոնց լուծման փուլերը դառնում են ծրագրի բաղադրիչներ: Դրանց լուծմանն է ուղղվում հետագա տարիների գործունեությունը:

**Գավառ համայնքի ղեկավար՝ Գուրգեն Երվանդի Մարտիրոսյան**

## *2. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

### 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գավառի տարածաշրջանում 2021 թվականին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում գյուղական 11 համայնքները եւ Գավառ քաղաքը միավորվել են կազմելով մեկ խոշորացված համայնք: Գավառ խոշորացված համայնքի կազմում են Գավառ, Նորատուս, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ, Ծաղկաշեն, Կարմիրգյուղ, Հայրավանք, Բերդկունք, Լճափ եւ Ծովազարդ վարչական շրջանները:

### 2.2. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

<u>Գավառ</u>

Հեռավորությունը մայրաքաղաք Երեւանից-98 կմ

Գավառ համայնքը Գեղարքունիքի մարզի վարչական, կրթական եւ մշակութային կենտրոնն է:

Ներկայիս Գավառ /տարբեր ժամանակներում` Նոր Բայազետ, Կամո/ քաղաքի եւ նրա շրջակա գյուղերի բնակիչների մեծ մասը վերաբնակեցվել են Հին Բայազետից, որը պատմական Հայաստանի հիշարժան բնակավայրերից մեկն էր` իր բերդով, եկեղեցիներով, սրբավայրերով, հերոսական անցյալով:

Գավառ համայնքն, ինչպես նաեւ իր տարածաշրջանը, ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի», մտել է Մեծ Հայքի Սյունիքի նահանգի մեջ: Գավառ համայնքի բնակատեղին գոյություն է ունեցել մ.թ.ա. 8-րդ դարում: Քաղաքը հիմնադրվել է Ուրարտական թագավոր Ռուսա 1-ի կողմից /մ.թ.ա. 735-713թթ./, որի ապացույցն է Գավառի «Դարի գլուխ» կոչված դամբարանադաշտում հայտնաբերված մ.թ.ա. 732թ. սեպագիր արձանագրությունը: Հնագիտական պեղումներից պարզվեց, որ այս տարածքը մ.թ.ա. 2-1 հազարամյակից եղել է բնակեցված: Համայնքը բնակեցված է եղել նաեւ Արշակունիների թագավորության ժամանակահատվածում /66-428թթ./:

Գաղթական Բայազետցիները Գավառ պատմական ավանի տեղում 1830թ. հիմնեցին Նոր Բայազետ բնակավայրը: Գավառը 1830թ. դառնում է Հայաստանի կարեւոր տնտեսական կենտրոններից մեկը, իսկ 1960-1991թթ. ՀՀ անկախությունը` համայնքում կառուցվեցին բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ, փողոցները ասֆալտապատվեցին եւ լուսավորվեցին, կառուցվեցին մեծաքանակ բազմաբնակարան շենքեր, բարելավվեց ժողովրդի կենսամակարդակը:

<u>Գեղարքունիք</u>

Ընդգրկված է եղել Ցարական Ռուսաստանի Երեւանի նահանգի Նոր Բայազետի գավառում: Խորհրդային տարիներին մասն է կազմել Հայկական ԽՍՀ Նոր Բայազետի գավառի, 1930 թվականից` Նոր Բայազետի շրջանի: Վերանվանվել է Գեղարքունիք 1946 թ. ապրիլի 4-ին: 1995 թվականից Գյուղը վերաբնակեցվել է 1828թ.-ին: Վերաբնակիչները եկել են Արեւմտյան Հայաստանի Կոգովիտ գավառից: Այն ավելի հին է քան ենթադրվում է, որի վկայությունն է 9-րդ դարում կառուցված Սուրբ Գեւորգ տաճարը: Գտնվում է Գավառ քաղաքից մոտ 9 կմ հարավ, ծովի մակարդակից 2040-2160 մ բարձրության վրա:

<u>Լանջաղբյուր</u>

Լանջաղբյուր (նախկին անվանումը՝ Քյուզաջըղ), գտնվում է Գավառ քաղաքից մոտ 7 կմ հարավ, ծովի մակարդակից 2050 մ բարձրության վրա: Բնակչությունը՝ 2115 մարդ (2011 թ.), հայեր:

Գյուղը հիմնադրել են 1829-1830 թվականներին Բայազետի գավառի գյուղերից ներգաղթածները: Քյուզաջըղ անվան տակ ընդգրկված է եղել Ցարական Ռուսաստանի Երեւանի նահանգի Նոր Բայազետի գավառում: Խորհրդային տարիներին մասն է կազմել Հայկական ԽՍՀ Նոր Բայազետի գավառի, 1930 թվականից՝ Նոր Բայազետի շրջանի: Վերանվանվել է Լանջաղբյուր 1950 թ. ապրիլի 19-ին: 1995 թվականից մտնում է ՀՀ Գեղարքունիքի մարզի մեջ: Լանջաղբյուր գյուղը հարակից է Սարուխան, Գեղարքունիք եւ Կարմիրգյուղ բնակավայրերին: Գյուղի ընդհանուր տարածքը կազմում է 2412 հա:

## Սարուխան

Հիմնադրվել է Ք.ա. 2-1 հազարամյակներում կառուցված կիկլոպյան ամրոցի հարավ-արեւմտյան կողմում: Ամրոցը, որի ավերակները նշմարվում էին Ծաղկավանքի բլուրի վրա, ունեցել է ստորերկրյա թունել դեպի մոտակա գետը: Ամրոցը համարվել է Ռուսա 1-ին արքայի կողմից հիշատակված Վելակունի (Գեղարքունիք) երկրի 23 թագավորներից մեկի նստավայրը: Գյուղի տարածքից հայտնաբերվել է արտաշիսյան սահմանաքար: Ինչը վկայում է, որ Արտաշես 1-ին Բարեպաշտ արքայի օրոք (Ք.ա. 189-160թթ) այստեղ արդեն գյուղական համայնք է ձեւավորված եղել:

Միջնադարում եղել է Գեղարքունիքի ամենախոշոր գյուղը, իսկ 17-րդ դարում եղել է գավառապետի նստավայրը: Գավառապետ մելիքներից հայտնի են Մելիք Փարսադանը, Մելիք Մալխասը եւ Մելիք Մանուչարը:

Գյուղը մինչեւ 1928թ. կոչվել է Դալիղարդաշ, որը եղել գյուղի հայ մելիքներից մեկի (Էհիի պապի) մականունը: 18-րդ դարի կեսերին գյուղը հիմնովին ավերվել է լեզգիների կողմից: 19-րդ դարի սկզբների Երեւանի խանի ջանքերով այստեղ հաստատվել են քոչվոր թաթարներ, որոնք կլիմային չդիմանալով շուտով հեռացել են:

Սարուխանի ներկայիս բնակիչների նախնիները 116 տնտեսություն 700 շնչով եկել են Հին Բայազետի Զանկիզոր (Զանկյազուր) եւ Սրբահան (Սուրբ Օհան) գյուղերից 1830թ. հունիսին: 1850թ. գյուղացիների ջանքերով բացվել է գյուղի առաջին դպրոցը, իսկ 1897թ.՝ պետական երկդասյա դպրոց:

## Գանձակ

Գանձակ համայնքը՝ նախկինում Քոսամահմեդ, ապա՝ Բատիկյան, վերաբնակեցվել է 1828թ Արեւմտյան Հայաստանի Բայազետի եւ Ալաշկերտի գավառներից տեղահանված հայերով: Գանձակ է վերանվանվել 1991 թվականի օգոստոսի 8-ին: Գյուղի պատմություն ավելի հին է, որի վկայությունն է գյուղի կենտրոնում պահպանվող 9-րդ դարի «Սուրբ Գեւորգ» եկեղեցին:

Գյուղը գտնվում է ծովի մակերեւույթից 2000-2750մ բարձրության վրա, որի տարածքը վերջանում է Գեղամա լեռների ամենաբարձր գագաթի՝ Աժդահակի ստորոտում:

## Կարմիրգյուղ

Կարմիրգյուղ համայնքը գտնվում է Գեղարքունիքի մարզի արեւմտյան մասում՝ մարզկենտրոնից 3 կմ հարավ-արեւելք: Այն Նախկինում անվանվել է Ղուլալի, իսկ ավելի վաղ Աշնակ:

Հիմնադրվել է 1828 թ. երբ սկսվել է ներգաղթը Արեւմտյան Հայաստանի Բայազետ նահանգից: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1940թ. հունիսի 1-ի հրամանագրով վերանվանվել է Կարմիրգյուղ:

Նորատուս

Գեղարքունիքի մարզում, Գավառագետի ափին, Գավառից 5 կմ հյուսիս-արեւելք է գտնվում Նորատուս գյուղը, որը Գեղարքունի գավառի եւ Հայաստանի հնագույն բնակավայրերից է, ուր պահպանվել են բազմաթիվ հուշարձաններ: Ավանդույթի համաձայն Նորատուս գյուղը հիմնել է Հայկ նահապետի թոռներից Գեղամը՝ մ.թ.ա XX-րդ դարում, որի անունից էլ առաջացել է Գեղարքունիք, Գեղամա լեռներ անունները, այնուհետ գալով Նորատուս գյուղի տարածք Գեղամ նահապետը հիմնում է ամառանոց եւ անվանում Նորատունս, այսինքն՝ նոր կառուցած տունս, հետագայում «ն» մասնիկը սղվել է եւ մնացել է ավելի բարեհունչ Նորատուս տարբերակը:

Հայրավանք

Հայրավանք (Գեղարքունի բերդ, Այրիվան), գյուղի տարածքը բնակեցված է եղել դեռ բրոնզի դարում, սակայն այդ ժամանակներից մեզ ոչ մի տեղեկություն չի հասել: Գյուղում հիմնական բնակչություն ձեւավորվել է 1925 թվականին՝ Նորատուսից 42 ընտանիքների տեղափոխմամբ: Հայրավանք է վերանվանվել 1991 թվականի օգոստոսի 8-ին:

Բերդկունք

Բերդկունքը եղել է քաղաք Մեծ Հայքի Սյունիք նահանգի Գեղարքունիք գավառում: Այժմյան Բերդկունքի՝ նախկինում Աղկալաի տեղում, ուր պահպանվում են հին քաղաքի ավերակները: Բերդկունքի մասին առաջին հիշատակությունը վերաբերում է Մ.Թ.Ա. 2-1-ին հազարամյակներում, Ազատ քաղաքը նույնացնում են Բերդկունքի հետ: Բերդկունքը Դվինից հեռու էր մոտ 115 կմ: Արաբական տիրապետության շրջանում կարեւորագույն հանգույց էր Դվին-Բերդկունք-Պարտավ տարանցիկ մայրուղու վրա: Բերդկունքը առեւտրական կենտրոն ու վաճառատեղի է եղել, հայտնի իր խանութներով, կրպակներով, պանդոկներով, ձիթհաններով եւ իջեւանատներով: Բեդկունքը ավերվել է թաթար-մոնղոլների արշավանքից՝ 13-14-րդ դարերում:

Լճափ

Լճափ (նախկին անվանումը՝ Աղզիբիր), գյուղ Հայաստանի հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանում, Սևան-Գավառ ավտոմայրուղու վրա, մարզկենտրոն Գավառից 20 կմ հյուսիս-արևմուտք: Լճափ գյուղը վերաբնակեցվել է 1831 թ. հունիսի ամսին: Գյուղն ավելի հին է, քան ենթադրվում է, որի վկայությունն է գյուղի ծայրամասում գտնվող մատուռը եւ հայկական մի շարք խաչքարեր: Այն կառուցվել է մ.թ. XI դարում:

Ծովազարդ

Ծովազարդ (նախկին անվանումը՝ Հաջի Մուխան), գյուղ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում, Սեւանա լճի հյուսիս-արեւմտյան ափից մոտ 2 կմ հեռավորությամբ, Սեւան-Գավառ ավտոճանապարհի վրա, մարզկենտրոն Գավառից 16 կմ հյուսիս-արեւմուտք: Բնակավայրը գտնվում է ծովի մակերեւույթից 1920 մ բարձրության վրա:

### 2.3. ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Կլիմայական պայմանների տեսանկյունից տարածքը բաժանվում է երկու՝ բարեխառն երկարատեւ տաք ամառներ եւ ցուրտ ձմեռներ ունեցող գոտիների, որոնք համապատասխանաբար բնորոշ են լեռնատափաստանային եւ լեռնամարգագետնային գոտիների:

Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը 450մմ է: Արեւային օրերի քանակը տարեկան կազմում է մոտ 320 օր: Ունի բազալտի չափավոր պաշարներ: Հարուստ է հանքային ջրերով: Մեծ գետը Գավառագետն է, շրջանի տարածքում է գտնվում Ակնա լիճը:

### 2.4. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Գավառ համայնքը իր մերձակա տարածքով գտնվում է Սեւանի ավազանի արեւմտյան մասում, Գեղամա լեռնաշղթայի արեւելյան լանջերին՝ 7-8 բալանոց սեյսմիկ գետում: Գավառագետի ավազանի տարածքի մոտ 80% -ը գտնվում է մինչեւ 2000մ բարձրության վրա, ամենաբարձր լեռնագագաթը Աժդահակն է՝ 3598մ բարձրությամբ: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 98կմ:

### 2.5. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է, սակայն աշխուժություն է նկատվում նաեւ առեւտրի եւ արհեստագործության շրջանում: Հաճախակի են երաշտի տարիները, որից տուժում է գյուղատնտեսությունը:

### 2.6. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գավառ համայնքը ժամանակին հանդիսացել է արդյունաբերական հզոր կենտրոն: Համայնքում գործել են յուղ-պանրի, ավտոնորոգման, կաբելի, սարքաշինական, «Սեւան» հանքային ջրերի, փայտամշակման գործարաններ, տրիկոտաժի, կարի, կոշիկի ֆաբրիկաները, մսի կոմբինատը, «Դիպոլ» արտադրական միավորումը եւ այդ գործարանները ունեցել են նաեւ իրենց դուստր կազմակերպությունները տարբեր համայնքներում: Խորհրդային միության փլուզման արդյունքում Գավառ համայնքի արտադրությունը ամբողջովին դադարեցվել է: Այժմ քաղաքում հաշվառված են եւ գործում են արտադրական, սպասարկման մասնավոր ձեռնարկություններ եւ անհատ ձեռներեցներ: Այսօր Գավառ համայնքում խոշոր արտադրական տարածքները եւ շինությունները չեն շահագործվում:

Աշխարհագրական դիրքից եւ ժամանակային հնարավորությունից ելնելով Գավառը հանդիսանում է արտադրական եւ ներդրումային կենտրոն: Այսօր ներդրողների ուշադրության կենտրոնում է քանի որ տարածաշրջանում առկա են արտադրական շինություններ, որոնք նպաստավոր են համայնքում տարբեր մասշտաբների արտադրություններ կազմակերպելու համար, բացի այդ աշխատուժը ավելի մատչելի է եւ հնարավորություն է ստեղծում համայնքում արտադրել ավելի մատչելի ինքնարժեքով արտադրանք, որը մրցունակ է նմանատիպ արտադրատեսակների հետ:

### 2.7. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գավառ համայնքում 2022 թվականի դրությամբ հաշվառված է 61904 բնակչություն, որից տղամարդ 31867, կին 30037, 0-18 տարեկաններ՝ 19289, տնային տնտեսությունների թիվը 15476:

Ըստ սեռահասակային դասակարգման՝ տղամարդիկ կազմում են բնակչության 51,5% -ը, իսկ կանայք եւ աղջիկները՝ 48,5 %-ը:

***Աղյուսակ 1. Համայնքի վերջին 3 տարվա ժողովրդագրական տվյալները՝ (01.01.2022 թ. դրությամբ)***

| Տարի | Ծնունդներ | Մահացություններ | Ամուսնություններ | Ամուսնալուծություններ |
|---|---|---|---|---|
| 2019 | 524 | 422 | 232 | 32 |
| 2020 | 505 | 526 | 203 | 21 |
| 2021 | 495 | 553 | 165 | 27 |

***Աղյուսակ 2. Բնակավայրերում բնակչության թվաքանակը՝***

| Բնակավայրերի անվանումները | Բնակչության ընդհանուր թիվը, որից | իգ. | ար. |
|---|---|---|---|
| Գավառ | 28792 | 14104 | 14688 |
| Բերդկունք | 292 | 132 | 160 |
| Գանձակ | 4339 | 2082 | 2257 |
| Գեղարքունիք | 1839 | 893 | 946 |
| Լանջաղբյուր | 2418 | 1164 | 1254 |
| Լճափ | 1168 | 538 | 630 |
| Ծաղկաշեն | 530 | 255 | 275 |
| Ծովազարդ | 2168 | 1017 | 1151 |
| Կարմիրգյուղ | 5918 | 2852 | 3066 |
| Հայրավանք | 786 | 377 | 409 |
| Նորատուս | 6189 | 2954 | 3235 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սարուխան | | 7466 | 3669 | 3797 |

***Աղյուսակ 3. Բնակչության տարիքային կազմը՝***

| *Բնակչության տարիքային կազմը՝ ըստ տարիքի* | *Բնակչությա ն թիվը* | *0 - 6* | *7 - 17* | *18 եւ ավելի* | *Այդ թվում՝ Փախստականներ* | *Այդ թվում՝ Հաշվանդամներ* | *Տնային տնտեսություն* |
|---|---|---|---|---|---|---|---|
| Բնակչության թիվը | 61904 | 4129 | 8503 | 49269 | - | 930 | 15476 |

## *3. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ*

### 3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ՝ 2022թ.

Գավառ համայնքի 2022 թվականի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 2,022,000,000 հազար ՀՀ դրամ:

Համայնքի ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 651,580,900 հազար ՀՀ դրամ, տոկոսային արտահայտմամբ 32%

### 3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ

Ժամանակակից շուկայական տնտեսությունում փոքր եւ միջին ձեռնարկատիրությունը հանդիսանում է տնտեսական համակարգի կարեւորագույն բաղկացուցիչը, որն էական դեր է խաղում տնտեսության կայունության եւ դինամիկ զարգացման գործում: ՓՄՁ հատվածը հանդիսանում է ցանկացած զարգացած տնտեսական համակարգի անբաժանելի եւ օբյեկտիվորեն անհրաժեշտ տարրը, առանց որի տնտեսությունն ու հասարակությունն ամբողջությամբ չեն կարող գոյություն ունենալ եւ զարգանալ: Չնայած ցանկացած զարգացած պետության «դեմքը» խոշոր ձեռնակություններն են, սակայն շուկայական տնտեսավարման համակարգի իրական հիմքը ՓՄՁ-ն է՝ որպես գործարարության առավել զանգվածային, դինամիկ ու ճկուն օղակ: Փոքր եւ միջին ձեռնարկությունները յուրաքանչյուր երկրի ինչպես նաեւ համայնքի տնտեսական եւ սոցիալական կայունության հիմնական երաշխիքն են:

Գավառ քաղաքում 2014 թվականից իր գործունեությունն է սկսել «Սեւան» հանքային ջրերի գործարանը, որը սակայն ամբողջ հզորությամբ չի աշխատում, սպառման հիմնական շուկա է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը:

Համայնքում գործում են նաեւ մի քանի փոքր կոշիկի արտադրամասեր-կոոպերատիվներ, որոնց սպառման հիմնական շուկան Գավառն է իր տարածաշրջանով, բայց արտադրանքի որոշ մասը նաեւ արտահանվում է: Գավառում գործում է նաեւ լիմոնադի արտադրամաս, որի սպառման հիմնական շուկան Գեղարքունիքի մարզն է: Վերջին տարիների մեծ թափով զարգանում է արիշտայի եւ կիսաֆաբրիկատների, օրգանական պարարտանյութերի արտադրությունը:

Գործում է նաեւ տրիկոտաժի փոքր արտադրություն, կաթնամթերքի մթերման կետ:

Գործում են նաեւ մի շարք հացի փռեր եւ թխվածքի արտադրամասեր, որոնց սպառման հիմնական շուկան Գեղարքունիքի մարզն է:

Առկա է նաեւ հացահատիկի վերամշակման արտադրամաս, որը սակայն իր գործունեությունը ծավալում է մասնակի:

### 3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ

Աշխարհագրական եւ բնակլիմայական դիրքից ելնելով՝ համայնքում որոշ առումով արդյունավետ է գյուղատնտեսությամբ զբաղվելը: Բնակչության մոտ 19% -ը զբաղվում է հենց այս ոլորտով. գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կարտոֆիլի, կաղամբի, կորնգանի, առվույտի, պտղի եւ այլ բանջարանոցային կուլտուրաների մշակությամբ, որոնք խիստ զգայուն են շրջակա միջավայրի նկատմամբ եւ բերքատվությունը մեծապես կախված է եղանակային պայմաններից: Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու եւ մեղր: Երաշտի տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում:

Ոռոգման ցանցի մաշվածության պատճառով բնակիչները դժվարանում են կազմակերպել գյուղմթերքների արտադրությունը: Անձրեւային տարիներին բերքահավաք ստացվում է, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի մոտ 30-50%-ը:

Արտադրված գյուղմթերքի հիմնական սպառման շուկա է հանդիսանում մասնավորապես Գավառի տարածաշրջանն ու Երեւան քաղաքը:

Համայնքը չունի բավարար չափով գյուղտեխնիկա, տեխնոպարկը անմխիթար վիճակում է, անհրաժեշտության դեպքում համայնքում գյուղատնտեսական գործունեությունը իրականացվում է մասնվոր հատվածի կողմից, ինչի արդյունքում անվերահսկելի է դառնում գնային քաղաքականությունը:

Գավառ համայնքում գործում է բնամթերքի մշակմանն ուղղված տարբեր փոքր եւ միջին արտադրամասեր, հիմնականում արտադրվում է՝ պանիր, թթվասեր, մածուն, մսամթերքային պահածո:

- ✓ Գյուղատնտեսության բնագավառում բնակչության զբաղվածության մակարդակը՝ 19%
- ✓ Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ մոտ 3000 հա
- ✓ Արոտավայրերի ջրարբիացման մակարդակը՝ միջին
- ✓ Խոշոր եղջերավոր անասունների քանակը՝ համապատասխանաբար 16.388,
- ✓ Մանր եղջերավոր անասունների քանակը՝ համապատասխանաբար խոզեր՝ 1912, ոչխարներ՝ 10.636, մեղվաընտանիքներ՝ 6211, ճագարներ՝ 609
- ✓ Արտադրվում է կաթ, միս, բուրդ, ձու, մեղր

### 3.4. ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԲՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

**Գավառը** Հայաստանի հնագույն բնակավայրերից է, որտեղ եւս կան բազմաթիվ հուշարձաններ: Խալդ աստծո քաղաք-տաճարը տեղացիներին հայտնի է «Բերդի գլուխ» անունով:

Ամրոցի երկարությունը արեւելքից արեւմուտք շուրջ 400մ է: «Բերդի գլխի» հարավարեւելյան կողմում Գավառագետի վրա կա սալաքարերից կառուցված մի կամուրջ, որին տեղացիները Քարե կամուրջ են ասում:



Գավառ քաղաքի կենտրոնում գտնվում է **Սբ. Աստվածածին եկեղեցին**: XX դարի առաջին տասնամյակում 1905 թ-ին, քաղաքի կենտրոնում վեր խոյացավ ժողովրդի միջոցներով կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին: Գավառի երկրագիտական թանգարանում պահպանված փաստաթղթերի համաձայն՝ եկեղեցու կառուցումը սկսվել է 1902 թվականին հոգեւորական նշանավոր գործիչ Խորեն Մուրադբեկյանի նախաձեռնությամբ եւ ճարտարապետ Վասիլի Միրզոյանի նախագծով: Այն կառուցվել է Գավառի մեծահարուստների միջոցներով, որոնց մեջ հատկապես մեծ է եղել Հայրապետ աղայի դերը: Սուրբ Աստվածածինը, որը Գեղարքունիքի մարզի մայր եկեղեցին եւ առաջնորդարանն է, օծվել է 1905 թվականին: Առաջին պատարագը մատուցել է Խրիմյան Հայրիկը: Եկեղեցուց ոչ հեռու գտնվում է 1848 թ-ին կառուցված **Սբ. Կարապետ** բազիլիկ եկեղեցին: Եկեղեցին խորհրդային տարիներին վերածվել էր պահեստի, իսկ այնուհետեւ անուշադրության էր մատնվել: 2012 թ-ին վերանորոգվեց եւ վերաբացվեց որպես գործող եկեղեցի: 1952թ. Գավառում բացվել է Գավառագիտական թանգարանը, ուր պահվում են տարածաշրջանում հայտնաբերված բազմաթիվ հնագիտական նյութեր:





Քաղաքից Արծվաքար տանող ճանապարհի եզրին գտնվում է **Սուրբ Հովհաննես** մատուռը, որը շինված է փլված ժայռաբեկորներից կազմված նեղ անցքի մեջ:



Արծվաքարի **Սուրբ Աստվածածին** եկեղեցի: 19-րդ դար, ձեռակերտ շինվածք: Գտնվում է Արծվաքար թաղամասի արեւմտյան եզրին: Եռանավ բազիլիկ է, խորանի աջ եւ ձախ կողմերում երկու ավանդատներով: Հարակից տարածքում 1999 թվականին արծվաքարցի բարերար Խաչիկ Սիմոնյանի կողմից կառուցվել է նոր Սուրբ Աստվածածին եկեղեցին:



Հացառատ թաղամասում պահպանվել են իրար կից **Ս. Աստվածածին եւ Ս. Գրիգոր եկեղեցիները**՝ շրջապատված պարսպով:

Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման ճշգրիտ ժամանակը հայտնի չէ: Թեեւ, եկեղեցու արեւելյան ճակատի վրա պահպանված շինարարական արձանագրության համաձայն, եկեղեցին կառուցել է Շաղաբաթ իշխան Առնեղացին 898 թ., սակայն իր ճարտարապետական տիպով եւ հարդարանքի տարրերով Ս. Աստվածածին եկեղեցին վերագրվում է VII դ.: Ենթադրվում է, որ 898 թ. կարող է նորոգման տարեթիվը լինել: Եռախորան, գմբեթավոր կառույց է՝ արեւմտյան ուղղանկյուն խաչաթեւով: Ունի երկու մուտք՝ արեւմտյան եւ հարավային: Կառուցված է գորշ, սրբատաշ տուֆով: Եկեղեցու արեւելյան ճակատին ագուցված է որմնախաչ:



**«Ջիարաթ» սրբատեղին** գտնվում է Գավառքաղաքից 11 կմհեռավորությանվրա՝ դեպիհարավ- արեւմուտք: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 2200-2300 մետր: Տեղի հայերեն անվանումը կորսված է՝ դարեր առաջ հայբնակչության բնաջնջման հետեւանքով: «Զիարաթ» նշանակում է ուխտատեղի, ուխտավայր: Այդպես է կոչվել տեղի արոտավայրերում իրենցանասուններն արածեցնող թուրքերի՝ կովկասյան թաթարների կողմից:

**Ս. Գրիգոր** եկեղեցին կից է Ս. Աստվածածին եկեղեցուն՝ հարավային կողմից: Կառուցվել է XIX դ., ավելի հին եկեղեցու հիմքի վրա: Եռանավ բազիլիկ է: Պահպանվել են հին եկեղեցու պատերի մնացորդները: Եկեղեցիների շուրջը ընդարձակ գերեզմանատուն է՝ բազմաթիվ թվագիր խաչքարերով եւ տապանաքարերով:



**Սբ. Խաչ** մատուռը գտնվում է Գեղամա լեռների համանուն լեռնագագաթի վրա, 2460 մ բարձրության վրա: Կառուցվել է 15-րդ դարում: Մատուռը վերակառուցվել է 1969 եւ 1998 թվականներին: Ներկայումս այն բարեկարգ վիճակում է: Մատուռը ուխտատեղի է Գավառի տարածաշրջանի բնակչության համար, ովքեր այստեղ են գալիս հիմնականում Խաչվերացի տոնին, ինչը մեծ շուքով է նշվում լեռան գագաթին՝ ուղեկցվելով մատաղի արարողությամբ, երգ ու պարով: Մատուռ տանող ճանապարհը երկար է, մի քիչ դժվար, սակայն դա չի խանգարում ուխտագնացներին:



Նորատուսի մեծ՝ այժմ էլ գործող պատմական գերեզմանոցը համանուն հուշարձանների խմբում յուրահատուկ տեղ ունի: Գերեզմանոցի պատմական որոշակի կարեւորություն ունեցող վիմագիր հիշատակությունների թիվը անցնում է 250-ից: Գյուղի կենտրոնում գտնվում է **ս. Աստվածածին** եկեղեցին՝ կառուցված 9-րդ դարի վերջին՝ Գեղարքունիի Սահակ իշխանի կողմից: Եկեղեցին գմբեթավոր սրահ է եղել՝ շինված համակ սրբատաշ եւ մեծ քարերով, վերջին դարերում փլվել է կամ, ինչպես ավանդաբար ասում են, գմբեթն ու ծածկը ավերվել են Լենկ-Թեմուրի արշավանքի ժամանակ: Եկեղեցին ունեցել է պարսպապատ բակ, ուր այժմ էլ կան բազմաթիվ խաչքարեր եւ տապանաքարեր՝ մեծ մասն արդեն տեղից խախտված: Գյուղի հարավային եզրին է գտնվում **ս. Գրիգոր Լուսավորիչ** կամ Դափուց վանքը: Այն այժմ կենտրոնագմբեթ փոքր եկեղեցի է, որին արտաքուստ հյուսիսում եւ հարավում, ավելացվել են երկու խորաններ: 2007թ-ին վանքը վերանորոգվեց: գյուղից դեպի արևելք, գտնվում է Շոռ գոլի վանքը: Ասում են հնում այդ տարածքում եղել է մի շոռ գոլ (աղի ջրով լցված լճակ), որի պատճառով վանքը կոչվում է Շոռ գոլի վանք:







Կարմիրգյուղի կենտրոնում է գտնվում **ս. Գրիգոր եկեղեցին**, որին տեղացիներն անվանում են Խոնարհուկ ժամ կամ Խաչեր: Թվագրվում է 15-րդ դարին: Եկեղեցու հարավ-արեւելյան կողմում կանգնած է գեղաքանդակ խաչքար, որի ճակատին քանդակված է թեւատարած արծիվ՝ ճանկերում բռնած գառ: Եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնում: Միանավ բազիլիկ տիպի եկեղեցի է, արեւելյան կողմում՝ խորանով: Եկեղեցու մուտքը հարավից է: Եկեղեցու շրջակայքի խաչքարերն ու տապանաքարերը հիմնականում վերաբերում են Գեղարքունիքի Մելիք Փիրհամզայի գերդաստանին: Հնագույն թվականն է՝ 1502: Նախկին ընդարձակ բակ-գերեզմանատունը այժմ գրավում է մի փոքր տարածություն: Պատճառն այն է, որ գերեզմանատան հարեւան բնակիչները քանդել են գերեզմանատան մեծ մասը եւ ի հաշիվ դրա՝ ընդարձակել են իրենց տնամերձ հողամասերը:

Գյուղում գտնվում է նաեւ **ս. Աստվածածին** եկեղեցին, որի կառուցման թվականը հայտնի չէ: Կառույցի հնագույն մասը 10-րդ դարի շինություն է: Ներկա կառույցը վերաշինվել է 17-րդ դարում: Մ. Սմբատյանցի եւ Ե. Լալայանի վկայությամբ՝ բեմի ստորին մասում եղել էմի արձանագրություն, որի վրա ընթերցվել է 1674թ: Եկեղեցին եռանավ-բազիլիկ տիպի կառույց է՝ արեւելյան կողմում բարձր բեմ ունեցող խորանով: Հարավից եկեղեցուն կից է զանգակատունը՝ երկթեւ տանիքով: 2001թ-ին սկսվեց եկեղեցու վերանորոգումը:

2007 թվականին Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում կառուցվել է **Սուրբ Աստվածածին** եկեղեցին՝ Սարուխան գյուղի բնակիչ, գործարար Արայիկ Ավետիսյանի անձնական ներդրումների հաշվին: Եկեղեցին կառուցվել է երեւանաբնակ Ստեփան Նալբանդյանի ճարտարապետությամբ: Այն ունի 15 մետր լայնություն, 20 մետր երկարություն եւ 24 մետր բարձրություն՝ առանց խաչի: Սարուխանի Սուրբ Աստվածածինը սրբատաշ, տուֆակերտ, քանդակազարդ, քարե կամարներով, քառանավ, գմբեթավոր եկեղեցի է:



**Իլիկավանք եկեղեցի (Իլկեվանից անապատ, Պառավի վանք).** Գտնվում է Լանջաղբյուր գյուղի հարավարեւելյան կողմում, կիկլոպյան ամրոցից քիչ հեռու, «Պառավի դար» կոչված բլրի լանջին: Խաչաձեւ հատակագծով գմբեթավոր փոքր շինություն է (VII դ.): Կանգուն է: Արձանագրություն չունի: XI-XII դդ. հիշատակվում է Իլկեվանից անապատ անունով: Պահպանված գմբեթային համակարգը, ճարտարապետական մանրամասերը, շինարարական տեխնիկան բնորոշ են վաղ միջնադարյան նմանատիպ հուշարձաններին: Խաչաթեւերի պատերը ուշ միջնադարի վերաշարվածք են:



**Հայրավանք IX-XIIդդ.** վանքային համալիրը գտնվում է Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղի հյուսիս-արեւելյան մասում Սեւանա լճի ափին, ժայռեղեն հրվանդանի վրա: Պահպանվել է եկեղեցին՝ արեւմուտքից կից գավթով: Եկեղեցին, կառուցված IX դարի վերջին, քառակոնք է, 6,15մ x 7,15մ ներքին առանցքային չափերով, հարավից եւ արեւմուտքից (բացվել է գավիթը կառուցելու կապակցությամբ) մուտքերով: XIIդ. վերջին կառուցված գավիթը, պատկանում է երկսյուն գավիթների տիպին, արեւելքից ավելացրած են երկհարկանի ավանդատներ, որոնք ընդգրկում են եկեղեցու արեւմտյան

աբսիդը: Գավիթն ունի երդիկավոր, ութանիստ, շթաքարեզարդ գմբեթ՝ շարված սեւ եւ կարմիր շեղադիր քարերից: Վանքի բազմաթիվ վիմագրություններից հնագույնը կատարված է 1211թ.-ին:

Հայրավանքի տարածքում պեղվել են մի շարք բնակարաններ եւ բնակատեղի: Ամենավաղ նյութը վաղ բրոնզեդարյան սեւ փայլեցրած անոթի պատահաբար գտնված կտոր է: Միջին բրոնզի դարին են վերաբերում գունազարդ անոթների երկու բեկորներ: Հայտնաբերվել են նաեւ կավե կուռք, բազմազան անոթներ, սուզակներ, կրակարաններ եւ այլն: Հիմքեր կան ենթադրելու, որ Հայրավանքի առափնյա ժայռին կառուցված կիկլոպյան ամրոցը, որը եղել է պարսպապատ բնակավայրի միջնաբերդ, վերաբերում է նույն ժամանակաշրջանին: Հայրավանքից գտնվել են նաեւ միջնադարյան հասարակ ու ջնարակած կավանոթների նմուշներ:



Ծովազարդ գյուղում եւ շրջակայքում պահպանվել են դամբարաններ (Ք.ա. 2-1-ին հզմ.), եկեղեցի (4-18 դդ.), միջնադարյան բազում խաչքարեր եւ նորակառույց երկու մատուռ **Ս. Գրիգոր Նարեկացու** անվամբ: Ծովազարդում, հենց ճամփեզրին է գտնվում **«Խաչ եւ Սուր»** հուշահամալիրը, որը բացումը տեղի ունեցավ 1993 թ-ին: Հուշահամալիրը նվիրված է Հայրենական մեծ պատերազմի եւ Արցախյան հերոսամարտի զոհերի հիշատակին:

Բերդկունք քաղաքի ավերակներից մինչեւ այժմ պահպանվում է կիկլոպյան տիպի (բրոնզի դար)



ամրոցը, որը անվանվել է **Աղկալա /Սպիտակ բերդ/,** տեղացիները անվանում են իշխանանց ամրոց, ի պատիվ Աշոտ Երկաթի: Համայնքում պահպանվել է 11-12-րդ դարերում կառուցված եկեղեցու ավերակներ եւ գերեզմաններ:



**«Դարի գլուխ»** այսպես է կոչվում դեպի քաղաքի կենտրոնն առաջացած քարափի վրայի հարթությունը, որի եռանկյունաձև մասում եղել է նախաուրարտական բերդ-շենը: Հենց այդ հին բերդի տարածությունն է միջնադարում վեր ածվել գերեզմանատան, ուր կա նաև հասարակ քարերով շինված մի մատուռ՝ **Սուրբ Ստեփանոս** անունով: Գերեզմանատունն ընդարձակվելով դուրս է եկել բերդի սահմաններից և տարածվել դեպի արևելք: Դրանք մի ժամանակ իրարից անջատված են եղել բերդի պարսպով. այն ժամանակի ընթացքում փլվել է և այժմ երկու մասերը գրեթե միացած են: Եռանկյունու արևմտյան մասում պահպանվում են հիանալի քանդակներով խաչքարեր, որոնք պատկանում են Գավառի երբեմնի տանուտերերին ու նրանց տոհմակիցներին: Այստեղ առանձնանում է Ս. Աստվածածնի մոտի խաչքարը, Գավառի առվի և եկեղեցու շինության վերաբերյալ կարևոր առձանագրությամբ, որը թվագրվում է 1374 թվականով:

**Ծաղկաշենի Սբ. Հովհաննես**



Ծաղկաշենի Սբ. Հովհաննես կամ, տեղացիների շրջանում ավելի տարածված, Սբ. Աստվածածին եկեղեցի(9-10 րդ դդ.): Ծաղկաշեն, գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռների արևելյան փեշերին, Գելոյիձոր գետի ափին, մարզկենտրոնից 8.6 կմ հարավ-

արևմուտք: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2160 մ բարձրության վրա: Նախկինում անվանվել է Վերին Գանձակ:



Գանձակ գյուղի **Սուրբ Գևորգ եկեղեցին** կառուցվել է 9-րդ դարում,միանավ բազիլիկ կառույց է,շրջակայքում կան տապանաքարեր,խաչքարեր,որոնց վրա կան տարբեր ժամանակաշրջանների փորագրություններ: Եկեղեցու ներսում Գունդուզ իշխանի տապանաքարն է,ժամանակի ընթացքում կատարվել է մասնակի վերանորոգում,սակայն ներկայումս տանիքը ունի վերանորոգման կարիք: Ըստ տեղացիների, Լենկ Թեմուրի արշավանքի ժամանակ եկեղեցու հարստությունը փրկելու համար, գյուղացիները այն թաքցրել են եկեղեցու բակում կամ հարակից տարածքներում,որպես նշան օգտագործելով խաչի ստվերը:



Գեղարքունիք գյուղում գտնվում են Ս**բ. Գեւորգ 15-16 դդ., Սբ. Ստեփանոս 13-14 դդ.** /վերականգնված՝ 20 դ./ մատուռները, որից 1 կմ հյուսիս արեւելք հատվածում գտնվում է նաեւ Մ. Թ. Ա. 2 հազարամյակի թվագրված Դամբարանադաշտը՝ Գավառ – Մարտունի խճուղուց աջ, «Չոր ավերակներ» գյուղատեղիից 0,5 կմ հյուսիս՝ Սևանա լճի ափին:

***Գավառը որպես զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող համայնք առանձնանում է նաեւ այլ բնորոշիչներով***.



*Աժդահակ (լեռնագագաթ)*

Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի կենտրոնական հատվածում, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերի սահմանագլխին: Աժդահակը՝ Գեղամա լեռնավահանի ամենաբարձր կետն է (3,597 մ): Գագաթին կա խառնարանային լիճ:

*Գավառի երկրագիտական թանգարան*



Գավառի երկրագիտական թանգարանում ներկայացված են Հայաստանի մասնավորապես Գավառ քաղաքի պատմությանը նվիրված հետաքրքիր կտավներ, գորգեր, հին բնակավայրերի վերարտադրություններ, մարզի եւ Սեւանա լճի պատմությանը նվիրված այլ նմուշներ:

*Լեւոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոն:*



Լեւոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնը կազմավորվել է 1935թ-ին: ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության որոշմամբ 1950 թվականին Կամոյի պետական թատրոնը անվանակոչվել է Լեւոն Քալանթարի անունով: Թատրոնի շենքը վերակառուցվել է 2018 թվականին: Թատրոնը հանդիսանում է մարզի մշակութային կարեւորագույն օջախներից մեկը:

*Գավառի անձնագիր – հուշապատ:*



Գտնվում է Գավառի կենտրոնական հրապարակի տարածքում: Անձնագիր-հուշապատը ներկայացնում է «Բերդիգլուխ» կոչվող վայրից գտնված Սեպագիր արձանագրությունը, որը թողել է ուրարտական թագավոր Ռուսան, Սարդուրի որդին: Արձանագրությունը ներկայացված է եռալեզու:

*Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձան*



Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող կոթողը տեղադրված է քաղաքիկենտրոնում, Սուրբ Աստվածածին եկեղեցու հարեւանությամբ: Հուշարձանը բազալտե սրբատաշքարից է, 14 մետրբարձրությամբ՝ զարդարված մանրաքանդակներով: Կոթողիճարտարապետը Ռ. Իսրայելյանն է, քանդակագործները՝ Ռ. Եկմալյանըեւ Բ. Հովհաննիսյանը: Հուշարձանի բացվել է 1967 թվականի դեկտեմբերի 22-ին: Ծածկոցը իջեցրել է որդեկորույս մայր՝ Ա. Մխեյանը:

*Սամվել Քոչարյանցի պուրակ*



Գտնվում է Գավառի կենտրոնական հրապարակի հարեւանությամբ: Այստեղ տեղադրված է ռազմական միջուկային զենքի գլխավոր կոնստրուկտոր, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, Լենինյան եւ պետական մրցանակների դափնեկիր, ԽՍՀՄ գիտության եւ տեխնիկայի վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, նորբայազետցի Սամվել Գրիգորի Քոչարյանցի կիսանդրին: Այնբացվել է 1987 թվականի հոկտեմբերի 3-ին: Պուրակը հիմնանորոգվել է 2020 թվականին:

*«Կոյռտ Հայրապետի բրոնզաձույլ արձան»*



Հայրապետ աղա Խաչատրյան (կըլոտ), նոր բայազետցի բարերար, իր ժամանակի մեծանուն առեւտրական, հայրենասեր: Ծնվել է 1844 թվականին: Արձանը տեղադրվել է 2015 թվականին՝ մահվան 100-րդ տարելիցի կապակցությամբ: Գտնվում է իր կառուցած դպրոցի (այժմ՝ «Հայրապետ Խաչատրյանի անվան արվեստի դպրոց») հարեւանությամբ: Նրան տվել էին «կըլոտ» անունը, քանի որ կարճահասակ էր: Նոր բայազետցիներն առանձնահատուկ սիրով են հիշում եւ փայփայում նրա անունը:

*Գռիձորի հովիտն*

Գավառագետի վտակ Գռիձորի հովիտն իրենից ներկայացնում է մի գեղատեսիլ սառցադաշտային տրոգ 200 մ խորությամբ, 300 մ լայնությամբ և 1 կմ երկարությամբ: Տրոգի

հատակի երկարությամբ ձգվող խզվածքային գոտուց բխում են բազմաթիվ հանքային աղբյուրներ: Այստեղով է անցնում դեպի Սևանա լիճը ձգվող տեկտոնական խզվածքը, որի երկարությամբ դուրս են գալիս բազմաթիվ հանքային աղբյուրներ: Տրոգը սկսվում է 3340 մ բարձրությունից և ձգվում է մոտ 500 մ: Այստեղ է գտնվում աշխարհի ամենասառնորակ ջուր պարունակող աղբյուրներց մեկը՝ +4˚C: Տրոգի վերջնամասում Գռիձոր գետի ջրերը 3մ բարձրությունից գահավիժելով ցած առաջացնում են ջրվեժ:



*Գեղամա լեռնավահանի մերձգագաթային սարավանդի վրա է գտնվում Ակնա լիճը*



Ակնա լճի ջրհավաք ավազանի մակերեսը զբաղեցնում է մոտավորապես 8.2կմ, որից 0.53 կմ2 զբաղեցնում է լճի հայելու մակերեսը: 1959թ.-ից վեր է ածվել լիճ-ջրամբարի: Կառուցվել է բնական լճի բազայի վրա: Լիճը հատակագծում ունի անկանոն ձվաձև տեսք՝ երկու փոքր խորշերով, որոնք գտնվում են լճի հարավային և արևելյան հատվածներում:

*Չերի բնակատեղի*



Նորատուս Գյուղից 2կմ արևելք լճի ափամերձ հարթության վրա վեր է խոյանում 200 մ հարաբերական բարձրությամբ խարամային հրաբխային կոն, որը ժայթքել է հոլոցենում: Նրա արևելյան լանջերում կան 2 ընդարձակ քարայրներ, որոնք եղել են նախնադարյան մարդու կացարաններ: Իսկ կոնի գագաթային մասում պահպանվել են կիկլոպյան ամրոցի մնացորդներ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Չերի բնակատեղին գործել է առանց ընդհատումների մինչև կիկլոպյան կառույցների երևան գալը, որից հետո քարայրը ծառայել է որպես պաշտամունքի վայր:

*Խոհանոց*

Կարմիր ցորենից պատրաստվող ավանդական հացը սննդային մեծ արժեք ունի եւ դիտարկվում է որպես բիո: Գաթան, շաքար-լոխումը եւ փախլավան, որոնք Գավառին բնորոշ խմորեղեններ են Աղաջրի մեջ առանց համեմունքների եփած իշխան ձուկը մարզին յուրահատուկ ճաշատեսակներից մեկն է: Քյուֆթան Գավառի ամենահայտնի ճաշատեսակն է, որը պատրաստվում է փայտի վրա ծեծած մսից, որից պատրաստում են գնդեր եւ եփում ջրում:

**3.5. ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ, ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Աղյուսակ 4.**

| Նախադպրոցական հաստատություններ | Խմբերի քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Կրտսեր խումբ | Միջին խումբ | Ավագ խումբ | Նախատեսված /երեխա/ | Հաճախող երեխաներ |
| «Գավառի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | 1 | 1 | 90 | 71 |
| «Գավառի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | 1 | 2 | 120 | 113 |
| «Գավառի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | 1 | 1 | 90 | 79 |
| «Գավառի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | 1 | 2 | 120 | 84 |
| «Գավառի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | 1 | 1 | 85 | 123 |
| «Գեղարքունիքի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | - | - | 40 | 36 |
| «Լանջաղբյուր մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | 1 | 1 | 90 | 68 |
| «Սարուխանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | 1 | 1 | 120 | 100 |
| «Սարուխանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ | - | 1 | 1 | 60 | 60 |
| «Գանձակի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | 1 | 1 | 90 | 78 |
| «Կարմիրգյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | 1 | - | 90 | 90 |
| «Նորատուսի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | 1 | 1 | 100 | 84 |
| «Նորատուսի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | 1 | 1 | 100 | 72 |
| «Լճափի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | - | 1 | 60 | - |
| «Ծովազարդի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 1 | 1 | - | 60 | 43 |

### Աղյուսակ 5.

| Արտադպրոցական հաստատություններ | Խմբեր/դասարաններ/երեխաներ | | |
|---|---|---|---|
| | Խումբ/դասարան | Երեխաների թիվը | Նախատեսված /երեխա/ |
| «Գավառի Ուսուցողական կենտրոն» ՀՈԱԿ | 6 | 139 | 240 |
| «Գավառի Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ | 6 | 103 | 150 |
| «Գավառի Երաժշտական դպրոց» ՀՈԱԿ | 24 | 195 | 200 |
| «Գավառի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ | 27 | 368 | 430 |
| «Գավառի Դուդուկի մասնագիտացված» ՀՈԱԿ | 3 | 20 | 40 |
| «Գավառի Մարզադպրոց» ՀՈԱԿ | 29 | 334 | 350 |
| «Գանձակի Երաժշտական դպրոց» ՀՈԱԿ | 6 | 93 | |
| «Սարուխանի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ | 11 | 176 | 250 |
| «Նորատուսի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ | 9 | 213 | 350 |
| «Կարմիրգյուղ Արվեստի դպրոց» ՀՈԱԿ | 9 | 317 | 350 |

### Աղյուսակ 6.

| Մշակութային հաստատություններ | Ընդհանուր տվյալներ | | | |
|---|---|---|---|---|
| | Գրքային ֆոնդ | Տարեկան հաճախումներ | Ընթերցողներ | Գրքածձկ |
| «Գավառի Քաղաքային գրադարան» ՀՈԱԿ | 88972 | 32396 | 5225 | 77360 |
| «Գավառի Մշակույթի տուն» ՀՈԱԿ | - | - | - | - |

### Աղյուսակ 7.

| | **Նախադպրոցական հաստատություններ** | **Միջնակարգ դպրոցներ** | **Հիմնական դպրոցներ** | **Ավագ դպրոց** | **Քոլեջներ** | **Բուհեր** |
|---|---|---|---|---|---|---|
| *Հաստատություններ* | 15 | 19 | 4 | 1 | 3 | 1 |
| *Ուսանողներ/ երեխաներ* | 1101 | 4553 | 1372 | 164 | 443 | 842 |
| *Մանկավարժներ/դասախոսներ* | 68 | 467 | 97 | 28 | 83 | 105 |
| *Տնօրեններ* | 15 | 19 | 4 | 1 | 3 | 1 |
| *Դասարաններ/խմբեր* | 41 | 259 | 180 | 18 | 47 | 76 |
| *Գրադարաններ* | - | 19 | 4 | 1 | 3 | 2 |
| *Լաբորատորիաներ* | - | 34 | 12 | 3 | 10 | 4 |
| *Քանի հոգու համար է նախատեսված* | 1285 | 13046 | 3307 | 500 | 700 | 3000 |

### Աղյուսակ 8.

| | *Աշխատողների թիվը* | *Տեխնիկաների քանակ* |
|---|---|---|
| *«Գավառի կոմունալ սպասարկում եւ բարեկարգում» ՀՈԱԿ* | *52* | *20* |

## *ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ)*

### Աղյուսակ 9.

| | *Բժշկական կենտրոն* | *Պոլիկլինիկա* | *Կլինիկա/առողջության կենտրոն* | *Ատամնաբուժարան* | *Դեղատուն* |
|---|---|---|---|---|---|
| *Հաստատություններ* | *1* | *1* | *5* | *9* | *17* |
| *Բժիշկներ* | *149* | *75* | *58* | *15* | *-* |
| *Քանի հոգու համար է նախատեսված* | *100* | *500/օր* | *-* | *-* | *-* |
| *Աշխատակազմ* | 199 | 87 | 72 | 20 | 40 |

## *ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ*

### Աղյուսակ 10.

| | ***Ցուցակում ընդգրկված*** | ***Վճարման ցուցակում ընդգրկված*** | ***Միանվագ օգնության ցուցակում ընդգրկված*** |
|---|---|---|---|
| *Ընտանիքների թիվը՝ 01.01.2022թ.* | 2804 | 2300 | 130 |

## *ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ*

### Աղյուսակ 11.

| | Գրանցված աշխատանք փնտրող | Գրանցված գործազուրկ | Զբաղվածության պետական ծրագրում ընդգրկված | Աշխատանքի տեղավորված |
|---|---|---|---|---|
| *Մարդ՝ 01.01.2021թ.* | 1310 | 1197 | 105 | 129 |
| *Մարդ՝ 01.01.2022թ.* | 1162 | 1037 | 59 | 161 |

## 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳԱԼԻՔ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

*2022-2026թ.թ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային եւ տեղական կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի եւ այլ շահագրգիռ կողմերի հետ:*

*Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ 2022-2026թթ.-ին նախատեսվում են հետեւյալ հանրապետական եւ մարզային ծրագրերն ու միջոցառումները՝*

- *Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության եւ այլ ուղղություններով:*
- *Համայնքում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակահամաճարակային միջոցառումների իրականացումը:*
- *ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա ստանալու եւ համայնքի բնակավայրերի գիշերային լուսավորման ցանցի անցկացման իրականացումը:*
- *Համայնքի բոլոր բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում կամ մասնակի վերանորոգում եւ ջրամատակարարման բարելավում՝ համագործակցության ներգրավելով «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին:*
- *Մարզի այլ համայնքների եւ բնակավայրերի մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում եւ շահագործում՝ համագործակցության ներգրավելով մարզի մասնավոր տրանսպորտային կազմակերպություններին:*
- *Առողջապահության եւ սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության եւ մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:*
- *Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում եւ իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում եւ իրականացում:*

*2022-2026 թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի եւ ՀՀ Գեղարքունիքի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային եւ տեղական դոնոր կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի սուբյեկտների, այլ կազմակերպությունների եւ անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը եւ միջոցառումները:*

### 4.1. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

## ***Գավառ քաղաքի գիշերային լուսավորության ցանցի ընդլայնումը եւ արդիականացումը***

*Համայնքի առաջնահերթ, հրատապ լուծում պահանջող խնդիրներից է, որը տարիների ընթացքում ընդգրկում է ավելի շատ փողոցներ ու տարածքներ՝ նպաստելով համայնքի անվտանգության, ապահովության, հետիոտների եւ վարորդների համար անցանելիության եւ անվտանգության բարձրացման, ինչպես նաեւ համայնքի արտաքին տեսքի բարելավմանը:*

*Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է գիշերային լուսավորության ցանցի անցկացում Գավառ քաղաքի եւ գյուղական համայնքների եւս 30 փողոցներում: Այս փողոցները կամ չեն ունեցել լուսավորության գիշերային համակարգ կամ էլ ժամանակի ընթացքում չշահագործվելու արդյունքում դարձել են անպիտան:*

*Ցանցի կառուցումից եւ արդիականացումից հետո համայնքը կունենա ժամանակակից չափորոշիչներին համապատասխան, ամբողջությամբ լուսավորված եւ անվտանգ փողոցներ:*

*Հիմնանորոգման ընթացքում իրականացվելու է լուսասյուների եւ լուսատուների տեղադրում, հաղորդալարերի անցկացում, հին եւ մաշված **համակարգի** արդիականացում:*

*Կտեղադրվի մոտ 1500 հատ ԼԵԴ լուսատու:*

*Ազդեցությունը համայնքի վրա՝*

*Ուղղակի շահառուներ են հանդիսանում*

*Գավառ քաղաքի եւ Ծովազարդ, Լճափ, Բերդկունք, Հայրավանք, Նորատուս, Կարմիրգյուղ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ եւ Ծաղկաշեն գյուղերի այն բնակիչները, որոնց փողոցներում իրականացվում է լուսավորության ցանցի կառուցում:*

*Կա շուրջ 15000 շահառու:*

*Անուղղակի շահառուներ են հանդիսանում*

*Գավառ համայնքի ողջ բնակչությունը, վարորդները եւ համայնք այցելած հյուրերը:*

*Լուսավորված փողոցի առկայությունը կապահովի այդ փողոցի բնակիչների եւ համայնքի մյուս բնակիչների, ինչպես նաեւ վարորդների հարմարավետ, ազատ եւ անվտանգ տեղաշարժը:*

***Գավառ քաղաքի եւ Ծովազարդ, Լճափ, Բերդկունք, Հայրավանք, Նորատուս, Կարմիրգյուղ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ եւ Ծաղկաշեն գյուղերի լուսավորվող բոլոր փողոցները ու նրբանցքները համարվում են տեղական նշանակության բանուկ փողոցներ:***

*Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է կատարել հետեւյալ աշխատանքները.*

*Գավառ քաղաքի Գրիգոր Նարեկացու, Դաշտոյան փողոց 2-րդ նրբանցքի եւ Կաբելագործների փողոցների ասֆալտապատման, մայթերի եզրաքարերի տեղադրման ջրահեռացման համակարգերի տեղադրման, դիտահորերի վերանորոգման եւ ընդհանուր համաշինարարական աշխատանքեր:*

*Ասֆալտապատվելու է Սայադյան փողոցը Ազատության փողոցին միացնող քաղաքի կենտրոնական հատվածում գտնվող Գրիգոր Նարեկացու փողոցը: Այս փողոցը քաղաքի ամենաբնակեցված փողոցներից է: Այս փողոցի վրա է գտնվում Գավառի մանկատան շենքը: Փողոցը Գավառի երկու կենտրոնական եւ գլխավոր փողոցները իրար միացնող եւ այս փողոցների երթեւեկությունը բեռնաթափող փողոց է համարվում, այն չի հիմնանորոգվել արդեն 30 եւ ավել տարի:*

*Ասֆալտապատվելու է շուրջ 500 գծամետր հատվածը, /մոտ 5000քմ, 5սմ հաստությամբ/:*

*Դաշտոյան փողոց 2-րդ նրբանցքը ունի իր առանձնահատկությունը, այն սկսվում է Դաշտոյան փողոցից եւ հասնում է մինչեւ Պետրովի փողոց: Այս փողոցի հիմքը թույլ է, մոտ 60 սմ խորությամբ արդեն հոսում են ստորգետնյա ջրեր: Փողոցը խիտ բնակեցված է, այն չի հիմնանորոգվել արդեն 30 տարի եւ ավել:*

*Ասֆալտապատվելու է շուրջ 400 գծամետր հատվածը, /մոտ 2000քմ, 5սմ հաստությամբ եւ լրացուցիչ ամրությամբ/:*

*Գավառ քաղաքի Գրիգոր Նարեկացու, Դաշտոյան փողոց 2-րդ նրբանցքի եւ Կաբելագործների փողոցների ասֆալտապատման, մայթերի եզրաքարերի տեղադրման ջրահեռացման համակարգերի տեղադրման, դիտահորերի վերանորոգման եւ ընդհանուր համաշինարարական աշխատանքեր:*

*Կաբելագործների փողոցը բազմաբնակարան բնակելի թաղամաս տանող միակ ճանապարհն է: Այն գտնվում է Գավառի կենտրոնական հատվածում, այս թաղամասը խիտ բնակեցված է, այստեղ է ապրում մոտ 350 ընտանիք, այն չի հիմնանորոգվել արդեն 30 եւ ավել տարի:*

*Ասֆալտապատվելու է շուրջ 650 գծամետր հատվածը, /մոտ 4000քմ, 5սմ հաստությամբ/:*

*Նորատուս գյուղում ասֆալտապատվելու է զոհվածների հուշարձանի տարածք տանող հատվածը եւ դեպի գյուղապետարան տանող ճանապարհը: Այս փողոցները գտնվում են գյուղի կենտրոնական եւ բանուկ հատվածներում: Այս փողոցը գյուղի ամենաբնակեցված փողոցներից է: Այս փողոցի վրա է գտնվում գյուղապետարանի շենքը եւ Արցախյան զոհերի հիշատակին կանգնեցված հուշարձանը: Այս փողոցը չի հիմնանորոգվել արդեն 30 եւ ավել:*

*Ասֆալտապատվելու է շուրջ 500 գծամետր հատվածը, /մոտ 5000քմ, 5սմ հաստությամբ/:*

*Իսկ Կարմիրգյուղ գյուղում նախատեսվում է ասֆալտապատել գերեզմանոց տանող ճանապարհը, որը երբեւիցէ ասֆալտապատ չի եղել, այս փողոցը եւս շատ խիտ բնակեցված եւ բանուկ փողոց է համարվում:*

*Ասֆալտապատվելու է շուրջ 1000 գծամետր հատված, /մոտ 6000քմ, 5սմ հաստությամբ եւ լրացուցիչ ամրությամբ/:*

*Վերանորոգելով եւ այն կահավորելով փողոցային երթեւեկության նշաններով կկանոնակարգվի երթեւեկությունը, կբարելավվի նշված փողոցի վրա գտնվող ենթակառուցվածքների վիճակը, ինչպես նաեւ բնակիչների տեղաշարժի խնդիրը, կպակասի համայնքի բյուջեից փողոցի վրա ծախսվող գումարները /հողալցման, հարթեցման եւ այլ աշխատանքներ/:*

Ազդեցությունը համայնքի վրա՝

*Փողոցների ասֆալտապատման ուղղակի շահառուներ են հանդիսանում այդ փողոցում ապրող շուրջ 7000 բնակիչները, փողոցների հարակից կազմակերպության աշխատակիցները եւ այդ փողոցներով երթեւեկող վարորդները:*

*Անուղակի շահառուներ են հանդիսանում համայնքի մյուս բնակիչները /15000 բնակիչ/, եւ համայնքում հաշվառված շուրջ 4000 հատ տրանսպորտային միջոցները:*

*Հիմնանորոգված փողոցների առկայությունը կապահովի այդ փողոցի բնակիչների եւ համայնքի մյուս բնակիչների, ինչպես նաեւ վարորդների հարմարավետ, ազատ եւ անվտանգ տեղաշարժը:*

*Փողոցները համարվում են տեղական նշանակության բանուկ փողոցներ:*

***Գավառ, Հայրավանք եւ Բերդկունք գյուղերում նոր մանկապարտեզի շենքի կառուցում:***

***Հիմնանորոգվելու է Գավառի թիվ 7 մանկապարտեզի մի մասնաշենքը, Լճափ եւ Լանջաղբյուր համայնքների մանկապարտեզների շենքերը:***

*Գավառի թիվ 7 մանկապարտեզի շենքի այս հատվածը գտնվում է վատթարագույն վիճակում՝ համայնքային բյուջեի միջոցների սուբվենցիոն ծրագրերի հաշվին նախորդ տարիներին հիմնանորոգվել է միայն մի մասնաշենքը, իսկ այս մասնաշենքում հիմնանորոգվել է միայն տանիքը, չկան նորմերին համապատասխան խմբասենյակներ, չկա ջեռուցման համակարգ, պատուհաններ եւ այլ հարմարություններ, այս մասնաշենքը ԽՍՀՄ փլուզման տարիներից ի վեր չի շահագործվել:*

*Հիմնանորոգման արդյունքում փոխվելու են հատակները, դռները, պատուհանները, անցկացվելու է ջեռուցման նոր համակարգ, իրականացվելու են համաշինարարական աշխատանքներ: Մանկապարտեզի շենքը ցանկապատվելու է, եւ բակում տեղադրվելու են խաղասարքեր եւ մարզասարքեր, ինչպես նաեւ մանկապարտեզը համալրվելու է անհրաժեշտ գույքով եւ տեխնիկայով:*

*Այս մանկապարտեզում այժմ գործում է միայն մի մասնաշենքը, որը ժամանակին կապիտալ վերանորոգվել է եւ գործում է 4 խումբ /120 երեխա/: Հերթագրված է մոտ 60 երեխա, որոնք չեն հաճախում մանկապարտեզ, հենց շենքային պայմաններից ելնելով:*

*Նոր մանկապարտեզի շենք է նախատեսվում կառուցել Գավառի «Բողբոջ» մանկապարտեզի հին շենքի տեղում, որը մասնագիտական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների հիման վրա ենթակա է քանդման: Այս շենքը չի գործում արդեն 20 տարի:*

*Նոր կառուցվող մանկապարտեզի շենք նախատեսված է 120 երեխայի համար /4 խումբ/:*

*Այս մանկապարտեզի շենքը գտնվում է բազմաբնակարան բնակելի թաղամասում, որը շատ խիտ բնակեցված է: Այս թաղի երեխաները հաճախում են մեկ այլ թաղամասում գտնվող մանկապարտեզ, ինչը դժվարություններ է առաջացնում թե երեխաների եւ թե ծնողների համար:*

*Այս թաղամասի բնակիչների բազմաթիվ դիմումների առաջարկությունների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ խնդիրը առաջնային լուծում պահանջող խնդիրը է: Գավառ համայնքում մանկապարտեզների կառուցումը, հիմնանորոգումը եւ մանկապարտեզներում շինարարական աշխատանքներ իրականացնելը առաջնային եւ լուծում պահանջող եւ համայնքի ռազմավարական խնդիրների ցանկում ներառված խնդիր է, որը նախատեսված է լուծել առաջիկա հինգ տարիների ընթացքում:*

*Կառուցվող մանկապարտեզը հագեցած է լինելու բոլոր կոմունալ հարմարություններով, գործելու են բոլոր ենթակառուցվածքները, ցանկապատվելու է եւ բակում տեղադրվելու են խաղասարքեր:*

*Հայրավանք եւ Բերդկունք գյուղերում դեռեւս ԽՍՀՄ փլուզման տարիներից ի վեր չի եղել եւ մինչ այժմ չի գործել մանկապարտեզ, սակայն խնդիրն ունի հրատապ լուծման կարիք: Նշված գյուղերը իրենց աշխարհագրական դիրքով իրար մոտ են, այս ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է կառուցելմեկ ընդհանուր մանկապարտեզ:*

<u>*Ազդեցությունը համայնքի վրա՝*</u>

***Ուղղակի շահառուներ** են հանդիսանում /Գավառ քաղաք/ Գավառի թիվ 7 մանկապարտեզ հաճախող 120 երեխաները Պարտեզում հերթագրված մոտ 60 երեխաները Մանկապարտեզի 14 աշխատակիցները: Անուղակի շահառուներ են հանդիսանում մանկապարտեզ հաճախող երեխաների եւ մանկապարտեզի աշխատակիցների ընտանիքի անդամները՝ շուրջ 400 բնակիչ Ուղղակի շահառուներ են հանդիսանում /Գավառի նոր մանկապարեզ/ Գավառի «Բողբոջ» մանկապարտեզի հարակից թաղամասի երեխաներ /120 երեխա/ Հնարավոր հաճախումներ /մոտ 90 երեխա/ մանկապարտեզի 14 աշխատակիցները: **Անուղակի շահառուներ են հանդիսանում** մանկապարտեզ հաճախող երեխաների եւ մանկապարտեզի աշխատակիցների ընտանիքի անդամները՝ շուրջ 400 բնակիչ*

***Ուղղակի շահառուներ** են հանդիսանում /Հայրավանք եւ Բերդկունք գյուղեր/*

- *Մանկապարտեզ հաճախող 90 երեխաները*
- *Մանկապարտեզի 14 աշխատակիցները*
- *Անուղակի շահառուներ են հանդիսանում*
- *Մանկապարտեզ հաճախող երեխաների եւ մանկապարտեզի աշխատակիցների ընտանիքի անդամները՝ շուրջ 400 բնակիչ*

***Ուղղակի շահառուներ են հանդիսանում /գյուղ Լճափ/***

- *Մանկապարտեզ հաճախող 60 երեխաները*
- *Մանկապարտեզի 8 աշխատակիցները*

***Անուղակի շահառուներ են հանդիսանում***

- *Մանկապարտեզ հաճախող երեխաների եւ մանկապարտեզի աշխատակիցների ընտանիքի անդամները՝ շուրջ 350 բնակիչ*
- *Ուղղակի շահառուներ են հանդիսանում /գյուղ Լանջաղբյուր/*
- *Մանկապարտեզ հաճախող 90 երեխաները*
- *Մանկապարտեզի 14 աշխատակիցները*
- *Անուղակի շահառուներ են հանդիսանում*
- *Մանկապարտեզ հաճախող երեխաների եւ մանկապարտեզի աշխատակիցների ընտանիքի անդամները՝ շուրջ 400 բնակիչ*

*Տաք, վերանորոգված, հերմետիկ պատուհաններով եւ հարմարավետ մանկապարտեզի առկայության դեպքում կնվազի ջեռուցման ծախսերին տրամադրվող գումարները, կնվազի երեխաների հիվանդանալու հավանականությունը, որն էլ կնվազեցնի դեղորայքին եւ բուժհաստատություններին հատկացվող գումարները:*

***Գավառ քաղաքում եւ Ծովազարդ, Լճափ, Բերդկունք, Հայրավանք, Նորատուս, Կարմիրգյուղ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ եւ Ծաղկաշեն գյուղերում թվով 12 խաղահրապարակների եւ պուրակների կառուցում***

*Գավառ քաղաքի Զոր. Անդրանիկի 1-ին փողոցի բազմաբնակարան բնակելի շենքերին հարող հատվածում եւ Ծովազարդ, Լճափ, Բերդկունք, Հայրավանք, Նորատուս, Կարմիրգյուղ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ եւ Ծաղկաշեն գյուղերի կենտրոնական համայնքապատկան հողամասերում խաղահրապարակի կառուցում, մարզասարքերի, խաղասարքերի, տաղավարի տեղադրում եւ լուսավորության անցկացում:*

*Գյուղական համայնքում սակավաթիվ են ժամանցի, զբոսանքի վայրերը, պատմական եւ մշակութային օջախները: Բնակիչները հնարավորություն չունեն իրենց ժամանցը կազմակերպելու հետաքրքիր վայրերում:*

*Հիմնանորոգված խաղահրապարակից օգտվելու են Գավառ քաղաքի վերոնշյալ բազմաբնակարան բնակելի շենքերի, հարակից այլ առանձնատների բնակիչներ՝ ընդհանուր շահառուների թիվը կազմելու շուրջ 1300-1400 մարդ, իսկ գյուղական բնակավայրերում լինելով իր տեսակով եւ հնարավորություններով առաջինը եւ միակը շահառուների թիվը ընդգրկելու է գյուղի ամբողջ բնակչությանը: Այստեղ բնակվող երեխաներ, պատանիներ եւ երիտասարդներ հնարավորություն կունենան զբաղվելու սպորտով եւ հնարավորություն կընձեռի կազմակերպել իրենց ժամանցը: Կառուցվող խաղահրապարակները կստեղծեն նպաստավոր պայմաններ երեխաների եւ մեծահասակների հանգստի, խաղերի, միջոցառումների եւ մարզանքների համար՝ նպաստելով երեխաների, պատանիների մտավոր ու ֆիզիկական զարգացմանը:*

*Կառուցապատվող տարածքները ընդգրկելու են մոտ 450քմ տարածություն՝ յուրաքանչյուր բնակավայրում:*

*<u>Ազդեցությունը համայնքի վրա՝</u>*

*Ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են: Մանկապարտեզների շենքերը եւ նոր կառուցվող մանկապարտեզի շենքը սեփականության իրավունքով պատկանում են համայնքապետարանին եւ շենքի հիմնանորոգման աշխատանքների համար ներդնելով 1555000,0 ՀՀ դրամ, կավելանա համայնքին սեփականության իրավունքով պատկանող տվյալ մանկապարտեզների շենքերի արժեքը:*

***Գավառի համայնքապետարանի վարչական շենքի հիմնանորոգում***

*Ջրամատակարարման եւ ջրահեռացման իրականացում, էլեկտրասնուցման եւ լուսավորության ցանցի անցկացում, նոր դռների տեղադրում, լամինատի եւ կերամիկական սալիկների իրականացում, տանիքի ծածկի փոխարինում:*

*Հիմնանորոգման ընթացքում իրականացվելու է շենքի դահլիճի, աշխատասենյակների, նկուղային հարկի հիմնանորոգում, պատերի եւ առաստաղի ներկում, լամինատե հատակի իրականացում, սանհանգույցների հիմնանորոգում, ինչպես նաեւ հակահրդեհային ազդանշանային համակարգի անցկացում, տեսահսկման համակարգի անցկացում:*

*Հիմնանորոգումից հետո համայնքը կունենա ժամանակակից չափորոշիչներին համապատասխան համայնքապետարանի շենք, բնակիչների սպասարկումը կիրականացվի ավելի բարեկեցիկ միջավայրում: Բնակիչների սպասարկման միջավայրը կբերվի սպասարկման բարձր չափորոշիչների, կպակասեն համայնքի բյուջեից համայնքապետարանի շենքին հատկացվող գումարային հատկացումները /շենքին տրամադրվող մասնակի վերանորոգումների համար եւ այլն/:*

*<u>Ազդեցությունը համայնքի վրա՝</u>*

*Ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են: Համայնքապետարանի շենքը սեփականության իրավունքով պատկանում է համայնքապետարանին, եւ շենքի հիմնանորոգման աշխատանքների համար ներդնելով 94595,0 ՀՀ դրամ, կավելանա համայնքին սեփականության իրավունքով պատկանող շենքերի արժեքը:*

***Գավառ քաղաքի թվով 3 բազմաբնակարան բնակելի շենքերի հիմնանորոգում***

*Փոխարինվելու են բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքները, իրականացվելու է հակահրդեհային լուծույթով մշակման աշխատանքներ:*

*Շենքերի 12 մուտքերում նախատեսվում է տեղադրել դռներ, փոխարինել պատուհանները, հիմնանորոգել աստիճանավանդակները եւ իրականացնել մուտքերի համաշինարարական աշխատանքներ:*

*Այս շենքներից մեկում առկա է նաեւ թաքստոց, որը բազմաբնակարան բնակելի շենքի կառուցումից ի վեր չի վերանորոգվել եւ չի գործարկվել, որը գտնվում է վատթարագույն վիճակում: Նախատեսված է առաջիկա զարգացման աշխատանքներում բազմաբնակարան շենքի թաքստոցը հիմնանորոգել եւ համապատասխանեցնել գործող նորմերին:*

*Համայնքում չեն եղել եւ չկան համատիրություններ, իսկ բնակիչների կողմից տարիների ընթացքում անխնա ձեւով օգտագործվել են մուտքերը, եւ պահպանման աշխատանքեր չեն իրականացվել: Ներկայումս այդ մուտքերը գտնվում են ոչ բարվոք վիճակում, որոնք չունեն դռներ, պատուհանները կոտրված են: Իսկ տանիքների ծածկը ներկայումս ազբոշիֆից է եւ գտնվում են անմխիթար վիճակում:*

*<u>Ազդեցությունը համայնքի վրա՝</u>*

*Հիմնանորոգելով շենքերի մուտքերը եւ տանիքները համայնքը կունենա ժամանակակից չափանիշներին համապատասխան բազմաբնակարան բնակելի շենքեր, կավելանա շենքերի ջերմամեկուսացումը, կբարձրանա շենքերի էներգաարդյունավետությունը, կպակասի բնակչի կողմից ծախսվող էլեկտրաէներգիայի եւ գազի քանակը, որն իր հերթին կբերի շենքերում էներգախնայողության եւ ջերմոցային գազերի արտանետման նվազման ($CO2$ գազի տարեկան արտանետումների կրճատման): Գազի եւ լույսի քիչ ծախսի դեպքում կշահի բնակիչը տնտեսապես եւ սոցիալապես:*

*Համայնքում առկա շենքերի էներգաարդյունավետության բարձրացումը եւ $CO2$-ի գազի արտանետման կրճատումը ոչ միայն համայնքի այլ նաեւ գլոբալ խնդիր է, որն ունի Երկիր մոլորակը:*

*Համայնքը իր առջեւ խնդիր է դրել իր հնարավորությունների սահմաններում օժանդակել այս խնդրի լուծմանը, ինչպես նաեւ այն համայնքի ռազմավարական զարգացման առաջնահերթություններից է, որն իր դրական ազդեցությունը կթողի բնակիչների կյանքի որակի եւ ապրելակերպի վրա, կմեղմի էներգակիրների թանկացման ազդեցությունը ցածր եկամուտ ունեցող ընտանիքներում:*

### ***Գավառ քաղաքում եւ Ծովազարդ, Լճափ, Բերդկունք, Հայրավանք, Նորատուս, Կարմիրգյուղ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ եւ Ծաղկաշեն գյուղերում թվով 12 խաղահրապարակների եւ պուրակների կառուցում***

*Գավառ քաղաքի Զոր.Անդրանիկի 1-ին փողոցի բազմաբնակարան բնակելի շենքներին հարող հատվածում եւ Ծովազարդ, Լճափ, Բերդկունք, Հայրավանք, Նորատուս, Կարմիրգյուղ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ եւ Ծաղկաշեն գյուղերի կենտրոնական համայնքապատկան հողամասերում խաղահրապարակի կառուցում, մարզասարքերի, խաղասարքերի, տաղավարի տեղադրում եւ լուսավորության անցկացում:*

*Գյուղական համայնքում սակավաթիվ են ժամանցի, զբոսանքի վայրերը, պատմական եւ մշակութային օջախները: Բնակիչները հնարավորություն չունեն իրենց ժամանցը կազմակերպելու հետաքրքիր վայրերում:*

*Հիմնանորոգված խաղահրապարակից օգտվելու են Գավառ քաղաքի վերոնշյալ բազմաբնակարան բնակելի շենքերի, հարակից այլ առանձնատների բնակիչներ՝ ընդհանուր շահառուների թիվը կազմելու շուրջ 1300-1400 մարդ: Գյուղական բնակավայրերում խաղահրապարակները լինելով իր տեսակով եւ հնարավորություններով առաջինը եւ միակը՝ շահառուների թիվը ընդգրկելու է գյուղերի ամբողջ բնակչությանը: Այստեղ բնակվող երեխաներ, պատանիներ եւ երիտասարդներ հնարավորություն կունենան զբաղվելու սպորտով եւ հնարավորություն կընձեռնվի կազմակերպել իրենց ժամանցը: Կառուցվող խաղահրապարակները կստեղծեն նպաստավոր պայմաններ երեխաների եւ մեծահասակների հանգստի, խաղերի,*

*միջոցառումների եւ մարզանքների համար՝ նպաստելով երեխաների, պատանիների մտավոր ու ֆիզիկական զարգացմանը:*

*Կառուցապատվող տարածքները ընդգրկելու են մոտ 450քմ տարածություն՝ յուրաքանչյուր բնակավայրում:*

*Ազդեցությունը համայնքի վրա՝*

*Գավառ քաղաքում եւ Ծովազարդ, Լճափ, Բերդկունք, Հայրավանք, Նորատուս, Կարմիրգյուղ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ եւ Ծաղկաշեն գյուղերում կառուցելով այս խաղահրապարակ-մարզահրապարակ, պուրակները՝ Գավառ խոշորացված համայնքը կլինի իր տեսքով եւ առանձնահատկություններով առաջինը եւ տվյալ գյուղերում միակն ու եզակին: Այս նախագծի իրականացմանբ կլուծվի երեխաների, պատանիների, երիտասարդների ինչպես նաեւ համայնքի բնակիչների ժամանցի եւ զբաղվածության խնդիրը, ինչպես նաեւ երիտասարդության շրջանում կզարգանա սպորտը եւ ֆիզիկական պատրաստվածությունը: Կբարելավվի մարզամշակութային կյանքը:*

*Մարզահրապարակների եւ խաղահրապարակների կառուցումը եւ արդիականացումը համայնքի ռազմավարական զարգացման առաջնահերթություններից է, որը իր ազդեցությունը կթողնի բնակիչների կյանքի որակի եւ ապրելակերպի վրա:*

*Կառուցելով ժամանակակից չափանիշներին համապատասխան խաղահրապարակ-մարզահրապարակ՝ այն կծառայի համայնքին առնվազն 30 տարի:*

*Արդյունքում Գավառ խոշորացված համայնքում կավելանա եւս 12 բարեկարգ եւ հիմնանորոգված ժամանցի վայր, որը իր նպաստը կբերի համայնքին: Համայնքը կլուծի քաղաքի ճարտարապետական, գեղագիտական, համայնքի բնակիչների ժամանցի կազմակերպման եւ ինչ որ չափով զբոսաշրջիկների ներգրավման խնդիրներ:*

### ***Գավառ համայնքի Կարմիրգյուղի Մշակույթի տան շենքի դահլիճի հիմնանորոգում***

*Կատարվելու են համաշինարարական աշխատանքներ, անցկացվելու ջեռուցման համակարգ եւ վերջնական շենք: Հիմնանորոգումից հետո համայնքը կունենա ժամանակակից չափորոշիչներին համապատասխան մշակույթի շենք, կակտիվանա քաղաքի մշակութային կյանքը, կպակասեն համայնքի բյուջեից մշակույթի տանը հատկացվող գումարները /շենքին տրամադրվող մասնակի վերանորոգումների համար եւ այլն/:*

*Հիմնանորոգման ընթացքում իրականացվելու է շենքի դահլիճի, աշխատասենյակների հիմնանորոգում, հանդերձարանների, էլեկտրական լուսավորության ցանցի փոխարինում, պատերի եւ առաստաղի ներկում, լամինատե հատակի իրականացում, ջեռուցման համակարգի անցկացում:*

*Ազդեցությունը համայնքի վրա՝*

*Հիմնանորոգելով Մշակույթի տան շենքը եւ այն դարձնելով ժամանակակից չափանիշներին համապատասխան՝ շենքի տեսքը կամբողջականանա եւ ընդհանուր շենքային պայմանները կբարելավվեն: Կունենանք հարմարավետ, անվտանգ եւ բարենպաստ շենքային պայմաններ՝ համայնքում բնակիչների սպասարկման, համայնքային ծառայությունների մատուցման որակի բարելավման ոլորտում:*

***Գավառ համայնքի Գեղարքունիք եւ Լանջաղբյուր գյուղերում խմելու ջրագծի կառուցումը***

*Հրատապ լուծում պահանջող եւ համայնքի առաջնահերթ խնդիրներից է, որը տարիների ընթացքում չի լուծվել:*

*Այս գյուղերում կառուցելով խմելու ջրագծի նոր համակարգ եւ արդիականացնելով գործող հին համակարգը մեկընդմիշտ կլուծվի գյուղացու խմելու ջրի խնդիրը:*

*Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է ոռոգման նոր համակարգի կառուցում եւ գործող համակարգի մասնակի հիմնանորոգում, որը անցնելու է Գեղարքունիք եւ Լանջաղբյուր գյուղերով:*

*Կառուցվելու է կապտաժ՝ մշտապես մաքուր եւ խմելու սառը ջուր ունենալու նպատակով: Ինչպես նաեւ մասնակի հիմնանորոգվելու է այս գյուղերում գործող խմելու ջրագծի առկա համակարգը: Հիմնանորոգվող հատվածը ընդգրկելու է մոտ 13 կմ ջրագիծ:*

*Խմելու ջրագծի կառուցումից եւ առկա համակարգի արդիականացումից հետո համայնքը կունենա ժամանակակից չափորոշիչների համապատասխան, ամբողջական ցանց:*

*Հիմնանորոգման ընթացքում իրականացվելու է խմելու ջրագծերի նոր ցանցի կառուցում, կապտաժի կառուցում:*

*<u>Ազդեցությունը համայնքի վրա՝</u>*

*Կառուցելով եւ արդիականացնելով Գավառ համայնքի Գեղարքունիք եւ Լանջաղբյուր գյուղերի խմելու ջրագծի համակարգը, համայնքը կունենա ժամանակակից չափանիշներին համապատասխան կոմունիկացիոն համակարգ: Կլուծվի գյուղերի բոլոր բնակիչների խմելու ջրի խնդիրը:*

*Խմելու ջրագծի կառուցումը համայնքի ռազմավարական զարգացման առաջնահերթություններից է, որը իր ազդեցությունը կթողի բնակիչների կյանքի որակի եւ ապրելակերպի վրա:*

*Կառուցելով այս համակարգը, եւ այն ժամանակակից չափանիշներին համապատասխան դարձնելով, կծառայի համայնքին առնվազն 30 եւ ավել տարի:*

***Քաղաքային տրանսպորտի կանգառատեղի***

*Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է Գավառ համայնքում տեղադրել թվով 6 հատ կանգառներ:*

*Համայնքում բացակայում են տեղակայված կանգառները, որը եւ եղանակային, եւ այլ տարբեր պայմաններում դժվարություններ եւ խնդիրներ է ստեղծում համայնքի բնակչության համար: Ունենալով կանգառներ՝ կբարելավի նաեւ երթուղային ցանցի եւ ուղեւորների սպասարկման որակը:*

*Տեղադրելով կանգառներ՝ կբարելավվի համայնքի երթեւեկության որակը, կլավանա բնակչությանը սպասարկվող տրանսպորտային ծառայությունների որակը, Գավառ համայնքը կունենա իր տեսքով եւ առանձնահատկություններով յուրօրինակ կանգառներ:*

*Կանգառների տեղադրումը համայնքի ռազմավարական զարգացման առաջնահերթություններից է, որն իր ազդեցությունը կթողի բնակիչների կյանքի որակի եւ ապրելակերպի վրա:*

*Կանգառները՝ ելնելով իրենց տեսակից, որակական հատկանիշներից եւ տեխնիկական բնութագրերից համայնքին կծառայեն 30 եւ ավելի տարիներ:*

*Ազդեցությունը համայնքի վրա՝*

*Կանգառների տեղադրման ուղղակի շահառուներ են հանդիսանում Գավառ համայնքի շուրջ 30000 բնակիչները: Անուղղակի շահառուներ են հանդիսանում Գավառի տարածաշրջանի մոտ 25000 բնակիչներ եւ Գավառ այցելած հյուրեր:*

*Կանգառների առկայությունը կապահովի համայնքի բնակիչների եւ համայնք այցելած հյուրերի տեղաշարժման, երթուղին ճիշտ կազմակերպելու եւ այլ տեխնիկական խնդիրներ:*

***Գավառ քաղաքում, Լճափ, Կարմիրգյուղ, Գանձակ, եւ Ծաղկաշեն գյուղերում գազաֆիկացման համակարգի կառուցում***

*Հրատապ լուծում պահանջող եւ համայնքի առաջնահերթ խնդիրներից է, որը տարիների ընթացքում չի լուծվել:*

*Այս գյուղերում եւ Գավառ քաղաքի թվով երեք նոր կառուցված թաղամասերում գազաֆիկացման ցանցի նոր համակարգի կառուցումը մեկընդմիշտ կլուծվի համայնքի բնակիչների բնակարանների գազաֆիկացման եւ շենքերի ու բնակարանների ջեռուցման խնդիրը:*

*Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է Գավառ քաղաքի թվով մեկ բազմաբնակարան բնակելի շենքում եւ երկու նոր կառուցվող թաղամասերում անցկացնել գազաֆիկացման նոր ցանց ընդհանուր առմամբ 2,5 կմ երկարությամբ գազատարի կառուցում:*

*Կարմիրգյուղում նախատեսված է կառուցել ընդհանուր 2,56 կմ երկարության նոր գազատար, որն անցնելու է Կարմիրգյուղի Սարգսյան եւ Պետրոսյան փողոցներով:*

*Լճափ գյուղում նախատեսված է կառուցել շուրջ 1 կմ երկարությամբ գազատար, որն հասնելու է Լճափի 2-րդ փողոցի վերջնամաս:*

*Գանձակ գյուղում նախատեսված է կառուցել ընդհանուր առմամբ 480 մետր երկարությամբ գազատար, որն անցնելու է գյուղի մի թաղամասով:*

*Իսկ Ծաղկաշեն գյուղում կառուցվելու է մոտ 1,5 կմ երկարությամբ գազատար, որի անհրաժեշտությունը գյուղում վաղուց կար:*

*Ծրագրի ընդացքում ընդհանուր առմամբ նախատեսված է կառուցել շուրջ 8046 մետր երկարությամբ գազատար, որն իր նպաստը կբերի համայնքի զարգացմանը:*

*Գազատարի կառուցումից հետո համայնքը կունենա ժամանակակից չափորոշիչների համապատասխան, ամբողջական ցանց:*

*Ազդեցությունը համայնքի վրա՝*

*Կառուցելով Գավառ քաղաքի, Լճափ, Կարմիրգյուղ, Գանձակ, եւ Ծաղկաշեն գյուղերի գազատարի նոր ցանցը համայնքը կունենա ժամանակակից չափանիշներին համապատասխան համակարգ: Կլուծվի գյուղերի բոլոր, ինչպես նաեւ Գավառ քաղաքի նորկառուցված թաղամասերի բնակիչների բնակարանների եւ առանձնատների գազաֆիկացման խնդիրը:*

*Այս գազատարի կառուցումը համայնքի ռազմավարական զարգացման առաջնահերթություններից է, որն իր ազդեցությունը կթողի բնակիչների կյանքի որակի եւ ապրելակերպի վրա:*

*Կառուցելով այս համակարգը եւ այն ժամանակակից չափանիշներին համապատասխան դարձնելով կծառայի համայնքին առնվազն 40 եւ ավել տարի:*

***Գավառ համայնքի սանիտարական պայմանների բարելավում***

*Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել 6 միավոր բազմաֆունկցիոնալ տեխնիկա, որը անհատույց օգտագործման պայմանագրով կտրամադրվի «Գավառ համայնքի կոմունալ սպասարկատում եւ բարեկարգում» ՀՈԱԿ-ին, ինչը հանդիսանալու է համայնքի սեփականությունը: Այս ծրագրի շրջանակներում համայնքապետարանը պարտավորվում է ստեղծել մեքենատեխնիկական պարկ, շահագործման իրավունքով տրամադրել կազմակերպությանը 15 տարով: Այդ ընթացքում համայնքապետարանը պարտավորվում է ձեռքբերված տեխնիկաները չօտարել եւ չօգտագործել մասնավոր նպատակներով: Նախատեսվում է Գավառ համայնքի ավագանու որոշմամբ տեխնիկաների պարկի համար «Գավառի կոմունալ սպասարկում եւ բարեկարգում» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով, մինչեւ 25 տարի ժամանակահատվածով տրամադրել համապատասխան տարածք (այդ թվում՝ հողատարածք): Անհրաժեշտության դեպքում ՀՈԱԿ-ը կարող է մատչելի վճարովի ծառայություններ մատուցել համայնքի բնակիչներին: Միաժամանակ համայնքապետարանը պարտավորվում է հետեւել մեքենաների շահագործմանը, միջոցներ տրամադրել պահպանության համար, ինչպես նաեւ համայնքի բնակչությանը մատուցել մատչելի ծառայություններ: Արդյունքում նախատեսվում է նաեւ ստեղծել 10 աշխատատեղեր, այդ թվում՝ 6 վարորդ, 4 ավտոմեքենաների սպասարկող անձնակազմ, ովքեր վարձատրվելու են համայնքի բյուջեից:*

*Ազդեցությունը համայնքի վրա՝*

*Խոշորացված համայնքում պարբերաբար կատարվելու են ճանապարհների հարթեցման, բարեկարգման, մաքրման, շինարարական աշխատանքներ, ինչի արդյունքում լուծվելու են ասֆալտապատ, ոչ ասֆալտապատ, դաշտամիջյան ճանապարհների մաքրման եւ հարթեցման, ձնամաքրման եւ ճանապարհների սպասարկման, շինարարական աշխատանքներին աջակցության խնդիրները:*

***Գավառ քաղաքի Մշակույթի տան եւ Գեղարվեստի դպրոցի շենքերի հիմնանորոգում***

*Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել Գավառ քաղաքի Մշակույթի տան շենքի դահլիճը, կատարել համաշինարարական աշխատանքներ, անցկացնել ջեռուցման համակարգ եւ վերջնական տեսքի բերել շենքի դիմային հատվածը: 2020 թվականի ընթացքում կատարվել են շենքի մի հատվածի հիմնանորոգման աշխատանքներ, հիմնանորոգվել են հանդերձարանները, եւ փոխարինվել է շենքի դիմային հատավծի ապակիները: Հիմնանորոգումից հետո համայնքը կունենա ժամանակակից չափորոշիչներին համապատասխան մշակույթի շենք, կակտիվանա քաղաքի մշակութային կյանքը, կպակասի համայնքի բյուջեից մշակույթի տանը հատկացվող գումարները /շենքին տրամադրվող մասնակի վերանորոգումների համար եւ այլն/: Հիմնանորոգման ընթացքում իրականացվելու է շենքի դահլիճի, երկու փոքր դահլիճների, աշխատասենյակների հիմնանորոգում, ներքին էլեկտրական լուսավորության ցանցի փոխարինում, պատերի եւ առաստաղի ներկում, լամինատե հատակի իրականացում, ջեռուցման համակարգի իրականացում եւ շենքի դիմային հատվածի երեսպատում (Այլուկաբոնդով): Մշակույթի տան դահլիճն ունի 500 նստատեղ եւ մեծ բեմ: Այս շենքում են տեղակայված եւ իրենց գործունեությունն են իրականացնում մի քանի երիտասարդական կազմակերպություններ: Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել Գավառ քաղաքի Գեղարվեստի տան շենքը ամբողջությամբ՝ անցկացնել ջեռուցման համակարգ, տեղադրել պատուհաններ եւ դռներ, կառուցել սանհանգույցներ, կատարել աստիճանավանդակի եւ*

*ճաղավանդակի հիմնանորոգում, լամինատի եւ կերամիկական սալիկների իրականացում, ջրամատակարարման եւ ջրահեռացման իրականացում, էլեկտրասնուցման եւ լուսավորության ցանցի անցկացում, կատարել համաշինարարական աշխատանքներ՝ համաձայն նախագծային փաստաթղթերի: Գեղարվեստի դպրոցում ԽՍՀՄ տարիների փլուզումից հետո մինչ այժմ ոչ մի շինարարական աշխատանքներ չեն իրականացվել: Հիմնանորոգումից հետո համայնքը կունենա ժամանակակից չափորոշիչներին եւ ստանդարտներին համապատասխան գեղարվեստի դպրոց, կակտիվանա քաղաքի մշակութային կյանքը, տարածաշրջանում կզարգանա գեղարվեստի ոլորտը: Գեղարվեստի դպրոցն ունի շուրջ 700 քմ տարածք, մեծ դահլիճ եւ ինը դասարան:*

*<u>Ազդեցությունը համայնքի վրա՝</u>*

*Հիմնանորոգելով մշակույթի տան եւ գեղարվեստի դպրոցի շենքերը եւ այն դարձնելով ժամանակակից չափանիշներին համապատասխան՝ շենքերի տեսքը կփոխվի եւ ընդհանուր շենքային պայմանները կբարելավվեն, կստեղծվի տաք, հարմարավետ, անվտանգ եւ բարենպաստ պայմաններ՝ համայնքում մշակութային միջոցառումներ իրականացնելու եւ գեղարվեստի ոլորտում կրթություն ստանալու համար: Կշատանա համայնքում գործող վերանորոգված մշակութային շինությունների թիվը, կստեղծվի մշակույթի ոլորտում բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման լայն հնարավորություն:*

***Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցու հարակից տարածքի կապիտալ վերանորոգում եւ Գավառ քաղաքում խաղահրապարակի կառուցում***

*Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսված է իրականացնել Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցու հարակից տարածքի հիմնանորոգում, մայթերի սալիկապատում, դեկորատիվ լուսավորության անցկացում, գազոնապատում եւ Գավառ քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի եւ մի քանի բազմաբնակարան շենքներին հարող հատվածում խաղահրապարակի հիմնանորոգում, մարզասարքերի տեղադրում, խաղարանների տեղադրում:*

*2020 թվականին սուբվենցիոն ծրագրի արդյունքում վերակառուցվեց հարակից պուրակը՝ տեղադրվեց մայթերի եզրաքարեր, սալիկապատվեց եւ կառուցվեց սալուղիներ:*

*Այն իր առանձնահատկությունն ունի. գտնվում է եկեղեցու հարակից եւ Գավառի ամենակենտրոնական հատվածում: Այստեղ է տեղակայված երկրաշարժի զոհերի հուշահամալիրը:*

*Համայնքում սակավաթիվ են ժամանցի, զբոսանքի վայրերը, պատմական եւ մշակութային օջախները: Բնակիչները հնարավորություն չունեն իրենց ժամանցը կազմակերպելու հետաքրքիր վայրերում:*

*Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցու հարակից տարածքի հիմնանորոգումը իր նպաստը կբերի նաեւ համայնքում զբոսաշրջության ակտիվացմանը:*

*Հիմնանորոգված խաղահրապարակից օգտվելու են թվով 9 բազմաբնակարան բնակելի շենքերի, հարակից այլ առանձնատների բնակիչներ եւ հարակից միջնակարգ դպրոցի աշակերտները: Ընդհանուր շահառուների թիվը կազմելու շուրջ 1300-1400 մարդ: Այս թաղամասում բնակվող երեխաներ, պատանիներ եւ երիտասարդներ հնարավորություն կունենան զբաղվելու սպորտով եւ հնարավորություն կնձեռի կազմակերպել իրենց ժամանցը: Հիմնանորոգվող խաղահրապարակը կստեղծի նպաստավոր պայմաններ երեխաների եւ մեծահասակների հանգստի, խաղերի, միջոցառումների եւ մարզանքների համար:*

*Կառուցապատվող տարածքը ընդգրկելու է մոտ 30*11 տարածություն:*

*<u>Ազդեցությունը համայնքի վրա՝</u>*

*Հիմնանորոգելով Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցու հարակից տարածքը՝ համայնքը կլուծի քաղաքի ճարտարապետական, համայնքի գեղագիտական եւ բնակիչների ժամանցի կազմակերպման, եւ ինչ որ չափով զբոսաշրջիկների ներգրավման խնդիրներ:*

*Արդյունքում Գավառ համայնքում կավելանա եւս մեկ բարեկարգ հիմնանորոգված ժամանցի վայր, որը իր նպաստը կբերի տարածաշրջանին: Ինչը նաեւ համայնքի ռազմավարական զարգացման առաջնահերթություններից է, որը իր ազդեցությունը կթողի բնակիչների կյանքի որակի եւ ապրելակերպի վրա:*

*Հիմնանորոգելով այս խաղահրապարակ-մարզահրապարակը Գավառ համայնքը կունենա իր տեսքով եւ առանձնահատկություններով առաջինը եւ տվյալ թաղամասում միակը: Կլուծվի երեխաների, պատանիների, երիտասարդների ժամանցի խնդիրը, ինչպես նաեւ կզարգանա սպորտը եւ ֆիզիկական պատրաստվածությունը: Կնպաստի նաեւ մարզամշակութային կյանքի բարելավմանը:*

*Մարզահրապարակների եւ խաղահրապարակների կառուցումը եւ արդիականացումը համայնքի ռազմավարական զարգացման առաջնահերթություններից է, որն իր ազդեցությունը կթողի բնակիչների կյանքի որակի եւ ապրելակերպի վրա:*

*Կառուցելով ժամանակակից չափանիշներին համապատասխան խաղահրապարակ-մարզահրապարակ՝ այն կծառայի համայնքին առնվազն 30 տարի:*

***Գավառ քաղաքի Սայաթ-Նովա փողոցի եւ Գերեզմանոցի ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ***

*Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է կատարել հետեւյալ աշխատանքները.*

*Գավառ քաղաքի Սայաթ-Նովա փողոցի եւ Գերեզմանոցի ճանապարհի ասֆալտապատման, մայթերի եզրաքարերի տեղադրման ջրահեռացման համակարգի տեղադրման, դիտահորերի վերանորոգման եւ ընդհանուր համաշինարարական աշխատանքեր:*

*Ասֆալտապատվելու է Սայադյան փողոցից գերեզմանոց տանող ճանապարհի մի հատվածը, Իսահակյան փողոցից գերեզմանոց տանող ճանապարհը, որը նաեւ լայնանալու է: Ինչպես նաեւ գերեզմանոցի կենտրոնական հատվածում ընկած ճնապարհը:*

*Գերեզմանոցի ճանապարհը երբեւիցե ասֆալտպատ չի եղել, այստեղ մի քանի անգամ իրականացվել է հողալցման եւ հարթեցման աշխատանքներ, սակայն անհրաժեշտություն կա այն ասֆալտապատվելու: Այս ճանապարհի մի հատվածը տարիներ առաջ ասֆալտապատվել է բարերարների կողմից:*

*Վերոնշյալ ճանապարհը չի հիմնանորոգվել ԽՍՀՄ փլուզման տարիներից ի վեր շուրջ 30 տարի, փողոցում այլեւս առկա չէ ասֆալտապատ հատված, գրունտային եւ ավազային է, արտաքին տեսքը քաղաքին չի համապաստասխանում, ինչպես նաեւ դժվարացնում է մեքենաների անցուղարձը:*

*Ասֆալտապատվելու է շուրջ 350 գծամետր հատվածը, /մոտ 1800քմ, 5սմ հաստությամբ/:*

*Սայաթ-Նովա փողոցը գտնվում է Գավառ քաղաքից դեպի Արծվաքար թաղամաս տանող ճանապարհի սկզբնամասում, այն քաղաքի ամենահին ու ամենաբնակեցված փողոցներից է: Այս փողոցի վրա է գտնվում տարածաշրջանի այն միակ մանկապարտեզը, որը հատուկ կարիքավոր երեխաների համար է նախատեսված: Գավառի Թթու ջուր կոչվող տարածքի հանգստի գոտի տանող եւ հանքային ջրերի գործարան տանող միակ ճանապարհն է:*

*Վերանորոգելով փողոցը եւ այն կահավորելով փողոցային երթեւեկության նշաններով կկանոնակարգվի երթեւեկությունը, կբարելավվի տվյալ փողոցի վրա գտնվող ենթակառուցվածքների վիճակը, կպակասի համայնքի բյուջեից փողոցի վրա ծախսվող գումարները /հողալցման, հարթեցման եւ այլ աշխատանքներ/:*

*Ասֆալտապատվելու է շուրջ 900 գծամետր հատվածը, /մոտ 4500քմ, 5սմ հաստությամբ/:*

*<u>Ազդեցությունը համայնքի վրա՝</u>*

*Հիմնանորոգելով եւ այն դարձնելով ժամանակակից չափանիշներին համապատասխան՝ փողոցի տեսքը կամբողջականանա եւ կստեղծվեն բարենպաստ պայմաններ համայնքի տնտեսական զարգացման համար:*

*Վերանորոգելով փողոցը եւ այն կահավորելով ճանապարհային երթեւեկության նշաններով՝ կկանոնակարգվի երթեւեկությունը, կթեթեւանա բնակիչների եւ համայնքի բեռը (20%-ով): Կբարելավվի տվյալ փողոցի վրա գտնվող ենթակառուցվածքների վիճակը (40%-ով), կպակասի համայնքի բյուջեից փողոցի վրա ծախսվող գումարները /հողալցման, հարթեցման եւ այլ աշխատանքներ/ (30%-ով):*

*Իսկ հիմնանորոգելով գերեզմանոցի ճանապարհը՝ կլուծենք համայնքում հուղարկավորություններին եւ հիշատակի օրերին առաջ եկած խնդիրները:*

***Գանձակի խորքային հորի կառուցում***

***Կարմիրգյուղի վարչական կենտրոնի կարիքների համար Կարմիրգյուղ համայնքի Ազատության փողոցի փողոցի 1-ին նրբանցք, Գայի, Ս. Ավետիսյանի, Կ. Դեմիրճյան և Զ. Շիոյանի փողոցների մի հատվածի ասֆալտապատման աշխատանքներ***

***Գեղարքունիք գյուղում ոռոգման ցանցի կառուցում***

***Սարուխանի թիվ 1 մանկապարտեզի կապիտալ վերանորոգման աշխատանքներ***

### 7.2. ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

**Աղյուսակ 12.**

| *Ծրագրի անվանումը* | *Պետական բյուջե* ՀՀ դրամ | *Համայնքային բյուջե* ՀՀ դրամ | *Միջազգային կազմակերպություններ* ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| Հիվանդությունների դեմ գյուղ. կենդանիների պատվաստում/խոշոր եղջերավորի՝ 90000, մանր եղջերավորի 100000 գլուխ / | 184100,0 | | |
| Խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում /գլ/ | 121200,0 | | |
| Համայնքում արոտավայրերի ջրարբիացման իրականացում /2-րդ բաղադր./ | | 45100,0 | 180600,0 |
| Ոռոգման համակարգերի հիմնանորոգում/ՋՕԸ/ | 25000,0 | | |
| Գավառագետ եւ Գետիկ գետերի հուների մաքրում | 142100,0 | | |
| Պայքար բույսերի վնասատուների դեմ եւ բուսասանիտարիայի ծառայություններ | 6500,0 | | |
| Գյուղատնտեսության ոլորտին տրվող | 326500,0 | | |

| | | | |
|---|---|---|---|
| վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում/ինտենսիվ այգի,գյուղ.հումքի մթերում,ագրոպարենային ոլորտի սարքավորումների եւ գյուղտեխնիկայի լիզինգ, հակակարկտային ցանցեր, «Փոքր եւ միջին խելացի անասնաշեն», ջերմատուն, Խ.Ե.Ա-ի, ոչխարաբուծության եւ այծաբուծության զարգացման եւ այլ ծրագրերի/ | | | |
| Արտադպրոցական դաստիարակություն | 13565,0 | | |
| Թանգարանային ծառայություններ եւ ցուցահանդեսներ | 27420,0 | | |
| Մշակութային միջոցառումների իրականացում | 1954,5 | | |
| Թատերական ներկայացումներ | 56472,8 | | |

**4.2. ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*Ներկայումս համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում համայնքի կողմից մասնավոր ընկերություններին պատվիրակված ծառայություններ չկան: Հետագայում կիստակեցվեն համայնքի եւ մասնավոր հատվածի միջեւ փոխշահավետ համագործակցության, հնարավոր ծառայությունների պատվիրակման եւ մոդելների կիրառման հարցերը:*

**4.3. ՀԱՐԵՎԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՂ ԳԱԼԻՔ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

*Գավառ համայնքը հանդիսանալով մարզկենտրոն, հաճախ է հյուրընկալում տարածաշրջանային համայնքներին՝ տարբեր միջոցառումների իրականացման եւ անցկացման ընթացքում: Արդյունքում համայնքերը հաղորդ են դառնում միմյանց մշակութային կարողություններին, հնարավորույթուններին ու առկա ռեսուրսներին, ինչն էլ հնարավորություն է ընձեռում հետագա միջհամայնքային միջոցառումներին համատեղ հանդես գալուն: Արդյունքում ձեւավորվում է մշակութային համագործակցություն, ինչը հնարավություն է ընձեռում հարաբերությունների ձեւավորմանն ու ամրապանդմանը եւ նոր ձեւաչափերով ներկայանալուն:*

**4.4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

*Գավառ համայնքը 2016 թվականից համագործակցում է ՄԱԶԾ-ԳԷՖ հիմնադրամի հետ եւ ընդգրկվել է «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրում, որի նպատակն է քաղաքային*

*ներդրումային ծրագրերի եւ ազգային քաղաքականության իրականացման ճանապարհով համայնքում քաղաքային լուսավորության համակարգի էներգիաարդյունավետության բարձրացման միջոցով խնայել էներգիան եւ կրճատել ջերմոցային գազերի արտանետումները, ինչպես նաեւ ցուցադրել նոր լուսադիոդային տեխնոլոգիաների առավելությունները: Ծրագրի իրականացման շարունակականությունը ապահովելու նպատակով ստեղծվել է շրջանառու հիմնադրամ, որում կուտակվելու է համակարգի շահագործումից առաջացած խնայողությունները: Խնայած գումարները հնարավորություն կտան համայնքում առկա լուսավորության համակարգը արդիականացնել եւ շահագործել լուսադիոդային տեխնոլոգիաներով: 2021թ.-ի Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանություն եւ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) իրավական ծրագիր Հայաստանում, Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալություն Հայաստանում, ՀՀ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների հետ համատեղ ստեղծեցի Գավառի բնակիչների սպասարկման միասնական գրասենյակը, որի նպատակն է «մեկ պատուհան» սկզբունքի համաձայն բնակիչներին բարձրորակ ծառայությունների մատուցումը, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության եւ թափանցիկության բարձրացումը, համայնքապետարանի եւ բնակչի առավել մատչելի եւ դյուրին հաղորդակցության ապահովումը:*

*ՈՒՆԻՍԵՖ-ի UPSHIFT միջազգային ծրագիրը, Հայաստանում ընդլայնելով աշխարհագրությունը, մուտք է գործում նաև Գեղարքունիքի մարզեր: 2022 թվականին դեռահասների զարգացման և հզորացման ծրագիրը հասանելի կլինի Գավառ խոշորացված համայնքում ևս: UPSHIFT-ի նպատակն է՝ նպաստել Գավառ խոշորացված համայնքում 12-18 տարեկան դեռահասների նախաձեռնողականության և քաղաքացիական ակտիվության բարձրացմանը՝ վերջիններիս ներգրավելով համայնքի կյանքի որակի բարելավմանն ուղղված գործընթացներում: UPSHIFT-ը խթանում է երիտասարդների զարգացումն ու համայնքի մարտահրավերները բացահայտելու, սոցիալական ու ձեռնարկատիրական լուծումներ փորձարկելու նրանց կարողությունները:*

*«Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի Գավառի համայնքի եռակողմ համագործակցության շնորհիվ 2022 թվականին Գավառ համայնքում հիմնվելու է բաց երիտասարդական կենտրոն՝ «Գավառի երիտասարդների տուն»: Կենտրոնի նպատակն է՝ բարձրացնել Գավառում և հարակից բնակավայրերում երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը՝ երիտասարդական աշխատանքի իրականացման միջոցով: Կենտրոնը համայնքահեն ծառայություններ է տրամադրելու դեռահասներին և երիտասարդներին:*

*«Շեն» ՀԿ կողմի իրականացվող ծրագիրը, որը ֆինանսավորում եմ Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ) «Անասնակերի արտադրություն և արոտների բարելավում՝ որպես ՔՈՎԻԴ-19 հետևանքների մեղմման միջոցառում» ծրագրի կողմից առաջարկվում է ներդնել հողատեսքերի բարելավման գործողությունների այնպիսի մոդել, որը նվազագույն ծախսերով կապահովի մաքսիմալ արդյունք: Առաջավոր փորձի և առկա ռեսուրսների արդյունավետ համադրության շնորհիվ փոքր ֆերմերային տնտեսությունները կկարողանան ինքնուրույն վերականգնել և բարելավել սեփականաշնորհված կամ վարձակալված հողատարածքները: Առաջարկվող գործողությունները կապահովեն նաև համայնքում գործող*

*«Արոտօգտագործողների կոոպերատիվների»՝ համայնքային ռեսուրսի կարողությունների բարելավում և առաջարկվող ծառայությունների նոր որակ: Մոդելը հնարավոր է կրկնօրինակել Գավառ համայնքում՝ հատկապես այն բնակավայրերում, որտեղ կան քիչ թե շատ կայացած կոոպերատիվներ: Նկարագրված խնդիրների լուծման կամ դրանց բացասական ազդեցությունը մեղմելու միջոցառումների շնորհիվ հնարավոր է բարձրացնել վարելահողերի և արոտավայրերի արտադրողականությունը, ապահովել հավելյալ եկամուտ: Առաջարկվող բարելավման մոդելն ապահովում է նախկինում ընդունված ավանդական բարելավման մոդելի համեմատ դրամական միջոցների խնայողություն:*

*Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականցվող Սոցիալական ներդրումների եւ տեղական զարգացման լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի երկրորդ բաղադրիչի շրջանակներում՝ հայտարարվել է դրամաշնորհ, որի շրջանակներում ներկայացվել է համայնքի կողմից համաֆինանսավորող համագործակցության ծրագիր առաջարկ: ՍՆՏԶ ԼՖ ծրագրի զարգացման նպատակն է համայնքային եւ միջհամայնքային ենթակառուցվածքի որակի եւ մատչելիության բարելավումը, որի շրջանակներում ծրագիրն աջակցում է համայնքային ենթակառուցվածքների վերականգմանը, տեղական, սոցիալական, ինստիտուցիոնալ եւ տնտեսական զարգացումը խթանելուն՝ հիմնվելով բարելավված ծառայությունների մատուցմանը, եւ միջհամայնքային պլանավորման ու համատեղ զարգացման ծրագրերի իրականացման համագործակցության վրա:*

*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Գերմանիայի միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ իրականում է հետազոտական ծրագիր՝ նվիրված Սեւանա լճի կենսածին ծանրաբեռնվածության թուլացմանը՝ գոմաղբով աղտոտման կանխարգելիչ միջոցառումների եւ տեխնոլոգյաների մշակմամբ:*
*Ծրագրի շրջանակներում իրականացում է միջոցառումների շարք Սեւանի ավազանի հարակից բնակավայրերում:*

### 4.5. ՏԵՂԱՑԻ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

*Գավառ համայնքը տարիների ընթացքում արտերկրում ձեւավորել է մեծ սփյուռք, որն ունի զգալի ներուժ եւ պատրաստակամություն հայրենի քաղաքին աջակցելու գործում, ասվածի հիմնավորվումն է քաղաքի կենտրոնական հրապարակի վերակառուցման, Գավառ համայնքի մուտքի հուշարձանի, Սամվել Քոչարյանց պուրակի շինարարական աշխատանքներում կատարված ներդրումներով, հիմնադրամի միջոցով: Ակնկալվում է համայնքի հետագա զարգացման ծրագրերում եւս հաշվի առնել նմանօրինակ նախաձեռնությունները:*

### 4.6. ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ԾՐԱԳՐԵՐԸ, ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

*Գավառ համայնքում մասնավոր ներդրողների կողմից առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է հիմնել ջերմոցային տնտեսություն՝ շուրջ 4 /չորս/ հա տարածքով, որի արդյունքում Գավառում կստեղծվի մոտ 90 աշխատատեղ:*

*Նախատեսվում է նաեւ արեւային էներգիայի արտադրության ֆոտովոլտային /PV/ կայանների հիմնում, որը հնարավորություն կընձեռի քաղաքում ստեղծել նոր աշխատատեղեր մոտ 10-ը:*

*Նախատեսվում է ներդրումներ կատարել նաեւ թեթեւ արդյունաբերության ոլորտում՝ մասնավորապես գուլպեղենի: Արդյունքում Գավառ քաղաքում կստեղծվի մոտ 150 աշխատատեղ:*

*«Գոլդ Տեքստիլ Գրուպ» ՍՊ Ընկերությունն իր ներդրումային ծրագրի շրջանակներում դիմել է համայնքապետարան, առաջարկելով ոչ միայն իր ընկերության ծրագիրն իրականացնել Գեղարքունիքի մարզում, այլ նաեւ ստեղծել պետություն-համայնք–մասնավոր գործընկերություն, որի ստեղծումն ու ծրագրի իրականացումը նպաստավոր կլինի ոչ միայն մասնավոր տնտեսվարողին, այլ նաեւ պետությանն ու համայնքին, կրճատելով գործազրկությունը:*

*Գավառում կառուցվող Բամբակամանվածքային գործարանի արժեքը կազմում է 27 100 000 եվրո, որտեղ կաշխատեն շուրջ 514 մարդ:*

*Գավառում գործարկվելու է նաեւ ձեթի գործարան, որի արժեքը կազմում է 413 000 եվրո, տեղում կաշխատեն 262 մարդ:*

*Ձեթն առաջանում է Բամբակի կորիզի վերամշակումից, որն իր որակական հատկանիշներով շուկայում ունի բավականին պահանջարկ եւ ապահովում է մրցունակություն, ինչպես նաեւ՝ հստակ ձեւավորված կայուն գին:*

*Այս ամենի իրականացման արդյունքում կավելանան համայնքային բյուջեի մուտքերը: Կլուծվի սոցիալական խնդիր, կստեղծվի աշխատանքային մթնոլորտ, ինչ-որ չափով կբարելավի համայնքի բարոյահոգեբանական իրավիճակը:*

*Այս ամենը լավագույն օրինակ կհանդիսանա մասնավոր ձեռնարկատերերի համար՝ համայնքում ներդրումներ կատարելու գործընթացում:*

## 5. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Համայնքի բյուջեի եկամուտները եւ ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման տեղեկատվությունը կցված է ՀՀՂԾ-ի փաթեթին / ԱՂՅՈՒՍԱԿ 13,14 /:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ**

**ԱՂՅՈՒՍԱԿ 15**

**(հազար դրամ)**

| Հ/Հ | ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2022թ. պլան. | 2023թ. կանխ. | 2024թ. կանխ. | 2025թ. կանխ. | 2026թ. կանխ. | 2023թ. 2022թ. նկատ. % | 2024թ. 2022թ. նկատ. % | 2025. 2022թ. նկատ. % | 2026թ. 2022թ. նկատ. % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ** | **2022000.0** | 2112000.0 | 2253000.0 | **2415000.0** | **2581000.0** | **104.5** | **111.4** | **119.4** | **127.6** |
| 1 | Հողի հարկ | 110725.0 | 120000.0 | 170000.0 | 240000.0 | 35000.0 | 108.4 | 153.5 | 216.8 | 280.0 |
| 2 | Գույքահարկ | 310046.8 | 320000.0 | 330000.0 | 340000.0 | 351000.0 | 103.2 | 106.4 | 109.7 | 113.2 |
| 3 | Տուրքեր | 18824.6 | 22000.0 | 25000.0 | 28000.0 | 32000.0 | 116.9 | 132.8 | 148.7 | 170.0 |
| 4 | Պաշտոնական դրամաշնորհներ | 1365964.7 | 1420000.0 | 1478000.0 | 1537000.0 | 1598000.0 | 104.0 | 108.2 | 112.5 | 117.0 |
| 5 | Այլ եկամուտներ | 216438.0 | 230000.0 | 250000.0 | 270000.0 | 290000.0 | 106.3 | 115.5 | 124.7 | 134.0 |

Համայնքի բյուջեի ֆինանսական կանխատեսմանը հիմք են հանդիսացել նախորդ տարիների մուտքերի կատարման վերլուծությունը, բյուջետային տարվա հարկային հաշվարկային եկամուտները: Վերլուծվել եւ հաշվի են առնվել նախորդ տարիների ընթացքում բյուջետային ծախսերի ու մուտքերի շարժը եւ դրանց վրա ազդող օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները: Կանխատեսման ժամանակ հաշվի են առնվել ազգաբնակչության սոցիալական եւ տնտեսական, ինչպես նաեւ ձեռնարկատիրական ու արտադրական ոլորտների իրական դրությունն առավել իրատեսական բյուջե կազմելու համար:

## *6. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Գավառ համայնքում սոցիալ տնտեսական զարգացմանը նպաստող խոչընդոտներից ամենաառաջնայինը աշխատատեղերի բացակայությունն է: Չկան գործող հիմնարկ-ձեռնարկություններ, իսկ գործող մասնավորներն էլ բավար չեն գոնե իրավիճակը քիչ թե շատ մեղմելու համար: Մասնավոր ներդրողների համար համայնքը նպաստավոր պայմաններ չունի/շենքեր, ենթակառուցվածքներ, հիմնական միջոցներ՝ տրանսպորտ, գույք եւ բնակլիմայական պայմաններ:

Տեղի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, հողագործությամբ եւ առեւտրով, որոնք արդեն տարիների ընթացքում դարձել են ոչ արդյունավետ եւ աստիճանաբար հետ են մղվում:

Համարվելով հիմնականում գյուղատնտեսական նշանակության համայնք, Գավառում բացակայում են ոլորտի զարգացմանը նպաստող նախապայմանները. չկա ջրարբիացում, ոռոգման ցանց, համապատասխան տեխնոպարկ, իսկ բնակլիմայական պայմաններն էլ առավել նպաստավոր չեն ոլորտի համար: Համայնքային բյուջեն ուղղակիորեն անզոր է լուծելու թվարկված խնդիրները, քանի որ դրանք պահանջում են երկարաժամկետ եւ լուրջ ծավալների ներդրումներ:

Համայնքում ենթակառուցվածքային հիմնովին թարմացում է անհրաժեշտ, ինչի բացակայությունը չի շահագրգռում մասնավոր ներդրողներին՝ գործունեություն իրականացնելու համար:

Կրթական, մշակութային, մարզական, երիտասարդների ժամանցի կազմակերպման, աղբահանության, սոցիալական աջակցություն ունեցող անձանց խնդիրները հնարավորության սահմաններում հոգում է համայնքապետարանը, սակայն սրանք ոլորտներ են, որ լրացուցիչ օժանդակության բացակայության դեպքում չեն կարող նկատելի արդյունք ապահովել: Նշյալ ոլորտներում հաջողություններ ունենալու համար անհրաժեշտ են պետական եւ այլ ներդրողների աջակցությունները:

### ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Վերջին տարիներին համայնքապետարանները հիմնականում ինքնապահպանման խնդիր են լուծել. նախադպրոցական, արտադպրոցական կրթության կազմակերպում փոքր համայնքներում չի իրականացվել: Մարզական եւ մշակութային կենտրոններ գործել են Գավառ քաղաքում եւ հարակից խոշոր բնակավայրերում: Ծավալել են մասնակի գործունեություն, իսկ գյուղական փոքր բնակավայրերի երեխաները լուրջ պակաս են ունեցել իրենց հոգեւոր, ֆիզիկական եւ գեղագիտական լիարժեք զարգացումն ապահովելու հարցում: Գավառ համայնքի

խոշորացումից հետո լուրջ աշխատանքներ է տարվում այդ ուղղությամբ. համայնքներում նախատեսվում է հիմնել հոգեւոր, ֆիզիկական եւ գեղագիտական կենտրոններ, որոնք կապահովեն երեխաների լիարժեք զարգացումը:

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԿԱ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍԻ ԹԵՐԶԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսական բիզնեսի թերզարգացվածությունը եւ ոլորտում առկա ռեսուրսների ոչ լրարժեք օգտագործումը պայմանավորված են մի շարք հանգամանքներով, որոնցից հարկ է առանձնացնել.

- Հետբերքահավաքային անհրաժեշտ գործընթացի բացակայությունը, որն իր մեջ ներառում է պահեստավորումը եւ տեսակավորումը: Սա հանգեցնում է հսկայական հետբերքահավաքային կորուստների: Երբեմն առանց գների շուրջ բանակցելու՝ գյուղացիները ստիպված են լինում վայրկյան առաջ վաճառել բերքը՝ փչանալուց խուսափելու նպատակով:
- Տեղական մակարդակում գյուղմթերքի վերամշակման ոլորտում նորարարական բիզնես մոդելների բացակայությունը եւ ներդրումների սակավությունը, որը թերեւս պայմանավորված է այնպիսի գործոնների բացակայությամբ, ինչպիսիք են գիտելիքը, տեղեկատվությունը եւ տեխնոլոգիաները:
- Արտահանման փոքր հնարավորությունները, պոտենցիալ շուկաներից հեռու գտնվելը:
- Գյուղապահովագրության, կառավարական դրամաշնորհների բացակայությունը:

### ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՈՉ ՌԱՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍԱԿԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքն իր աշխարհագրական դիրքով, պատմամշակութային եւ ազգագրական առանձնահատկություններով ունի զբոսաշրջային կենտրոն դառնալու լավ հնարավորություններ: Լուրջ նախադրյալներ կան պատմական տուրիզմի զարգացման համար: Համայնքը մինչ օրս չի օգտագործել իր զբոսաշրջային պոտենցիալը: Ուշադրության են արժանի ոլորտի զարգացման հետեւյալ խոչընդոտները.

- Համայնքը գրագետ կերպով գովազդող օնլայն հարթակի, համայնքում տուրիստական գործակալության, ինչպես նաեւ օտարալեզու քարտեզի բացակայությունը:
- Համապատասխան ենթակառուցվածքների՝ ավանդական ոճի հյուրատների, էթնոգրաֆիկ թանգարանների բացակայությունը:

### ՄԻՋԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՆԲԱՐԵԿԱՐԳ ՎԻՃԱԿԸ

Համայնքում ճանապարհաշինության ոլորտը մեծածավալ ներդրումներ է պահանջում: Համայնքի գյուղական բնակավայրերի ճանապարհների զգալի մասը ձմռան ամիսներին դառնում են ձյունածածկ ու անանցանելի: Հետեւաբար, ճանապարհների մաքրման եւ ճանապարհային սպասարկման որակի բարելավման խնդիրները եւս առաջնահերթ լուծում են պահանջում:

## ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՋՐԱԳԾԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ՋՐԱԳԾԵՐԻ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ-ից մնացած ոռոգման ջրի խողովակները մաշվել են ու խնդրի լուծումը տարեցտարի բարդանում է: Խմելու ջրի ջրագծերը նույնպես գտնվում են քայքայման եզրին, որոշ համայանքներում չեն պահպանվում տարրական սանիտարական պայմանները:

### ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԻ ՄԱՇՎԱԾ ՎԻՃԱԿ

Նախկինում կենտրոնացված աղբահանություն եւ սանիտարական մաքրում իրականացվել է միայն Գավառ քաղաքում, մասամբ բոլոր գյուղական բնակավայրերում, իսկ աղբի տեսակավորում եւ վերամշակում համայնքի որեւէ բնակավայրում չի իրականացվել: Սանիտարական նորմերին հանապատասխանող աղբավայրեր համայնքում չկան: Դրանք ավելի շուտ աղբաթափման վայրեր են, որոնք որոշ գյուղական բնակավայրերում նույնիսկ գտնվում են բնակավայրերի տարածքում: Այս ոլորտում նախատեսվում է ցուցաբերել համալիր մոտեցում՝ աղբահանության համակարգի բարելավման եւ համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման ուղղությամբ:

### ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Տարածաշրջանում տեղումները առատ են: Կարկտահարությունից վնասված բերքը պատճառով բնակիչները տարեցտարի հրաժարվում են հողերը մշակելուց, այդ իսկ պատճառով հողագործությունը դառնում է խնդիր:

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԻՉ ՔԱՆԱԿԸ

Սա լուրջ խոչընդոտ է հանդիսանում հողատարածքների որակյալ եւ արդյունավետ մշակման համար: Գյուղատնտեսության ծեռներեցության զարգացման հիմնական դժվարություններից են նաեւ գյուղատնտեսական աշխատանքների կատարման բարձր գները եւ ոռոգման ցանցի մաշվածությունը: Ջրի առկայությունը հնարավորություն կտար զարգացնել բանջարաբոստանային կուլտուրաների մշակումը: Համայնքն ունի նաեւ գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման եւ իրացման խնդիր: Իրացման խնդիրներից մեկն էլ այն է, որ գյուղատնտեսական արտադրանքը շատ հաճախ վաճառվում է գյուղացիների համար ոչ շահավետ գներով:

## 7. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՍ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**Աղյուսակ 12.**

| ***ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ*** | ***ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ*** |
|---|---|
| ● Գավառը հանդիսանում է Գեղարքունիքի մարզկենտրոնը<br>● Մայրաքաղաքից գտնվում է 98կմ հեռավորության վրա, մշտապես պահպանվում է կապը Երեւանի հետ<br>● Բնակչության մեծամասնության վստահությունը ՏԻՄ-ին<br>● Մասնագետների կրթական բարձր մակարդակ<br>● Գավառագետի առկայությունը հնարավորություն է ընդձեռում ընդլայնել ոռոգման համակարգը եւ ջրարբիացնել անջրդի հողատարածքները<br>● Հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների առկայություն<br>● Պատմամշակութային արժեքների առկայություն, որոնց շնորհիվ կարելի է զարգացնել զբոսաշրջանությունը<br>● Համայնքի գազիֆիկացված լինելը<br>● Արտադրական ազատ տարածքների առկայություն<br>● Բնակլիմայական բարենպաստ պայմաններ՝ 320 արեւային օր/տարի<br>● Բարձրագույն եւ միջին մասնագիտական կրթական կառույցների առկայությունը<br>● Սեւանա լճի մոտ գտնվելը<br>● Էնդեմիկ կենդանական եւ բուսական տեսակներ առկայությունը<br>● Բերրի վարելահողերի առկայությունը<br>● Սեւան - Մատունի մայրուղուն մոտ գտնվելը<br>● Պատմամշակութային հուշարձանների առկայությունը | ● Ենթակառուցվածքների անբարեկարգ վիճակ<br>● Ծնելիության ցածր մակարդակ<br>● Արտագնա աշխատանքի մեկնողների թվի ավելացում<br>● Գործազրկության բարձր մակարդակ<br>● Սոցիալապես անապահովների բարձր տոկոս<br>● Կրթական հաստատությունների շենքերի անբարեկարգ վիճակ<br>● Արտադրական եւ արդյունաբերական կազմակերպությունների բացակայությունը<br>● Բնական աղետները (կարկտահարթույուներ, երաշտ, ջրհեղեղ)<br>● Ոռոգման ջրի ջրագծերի բացակայությունը եւ առկա ջրագծերի մաշվածությունը<br>● Գյուղատնտեսական տեխնիկայի սակավությունը եւ մաշվածությունը<br>● Գյուղատնտեսական արտադրանքի սպառման եւ արտահանման համար սակավ հնարավորությունները<br>● Զբոսաշրջության ոչ բավարար մակարդակը<br>● Բնակավայրերի ճանապարհների վատ վիճակը, ներհամայնքային եւ դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը<br>● Բազմաբնակարան շենքերի խիստ մաշվածությունը<br>● Հակակարկտային կայանքների բացակայությունը<br>● Բնակչության շրջանում համայնքային խնդիրների վերաբերյալ լուծումների հետաքրքրվածության պակաս |
| ***ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*** | ***ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ (ՎՏԱՆԳՆԵՐ)*** |
| ● Մեծ աշխատուժի առկայություն<br>● Համայնքի ֆինանսական կայությունուն<br>● Փոխառու միջոցների ներգրավման հնարավորություններ<br>● Ինժեներական լաբորատորիա<br>● Տեղական եւ միջազգային կազմակերպություններ<br>● Ստորգետնյա բնական խմելու հանքային | ● Հեղեղատարների բացակայություն ու վթարայնություն<br>● Խմելու ջրի ջրավազանի վթարայնություն<br>● Վթարային շենքերի առկայություն<br>● Բնակչության սոցիալ-տնտեսական վատ վիճակը նպաստում է արտագաղթին<br>● Հարկերի եւ վարձավճարների գանձման դժվարությունները, որը մեծ վտանգ է |

| | |
|---|---|
| ջրերի առկայություն<br>● Գավառագետ մեծ պաշարների բազայի վրա ոռոգման համակարգի կառուցում, դաշտավարության եւ անասնապահության ճյուղերի զարգացում<br>● Գյուղատնտեսական տեխնիկայի նորացումը կնպաստի դաշտավարության զարգացմանը<br>● Հակակարկտային կայանքների տեղադրումը կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը<br>● Համայնքում առկա պատմամշակութային արժեքների բազայի վրա տուրիզմի զարգացումը,<br>● Բամբակամանվածքային ֆաբրիկայի վերագործարկումը կբերի նոր աշխատատեղերի ստեղծմանը<br>● Զբոսայգիներ, հանգստի, ժամանցի գոտիների ստեղծումով կաճի համայնքի գրավչությունը | առաջացնում բյուջեի կատարման համար<br>● Վարելահողերի մի մասի չմշակելու հետեւանքով հողերի որակազրկումն ու քայքայումը<br>● Ներբնակավայրային փողոցներում եւ ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը |

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԻՍ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

**Աղյուսակ 13.**

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| · <u>Գավառ</u> - բանկերի, ՈՒՎԿ-ների առկայությունը, արհեստագործական ուսումնարանը, քաղաքում գտնվող պետական հիմնարկների եւ շինարարական հիմնարկների առկայությունը, զբոսայգիների առկայությունը, 3 բջջային օպերատորների եւ ինտերնետ կապի առկայությունը, քաղաքի գազաֆիկացված լինելը, խմելու ջրի ներքին ցանցի առկայությունը, մարզային հեռուստաընկերություն գործունեություն:<br>· <u>Գանձակ</u> - Բերրի վարելահողերի առկայությունը, խմելու ջրերի մեծ պաշարների առկայությունը, շինարարական ավազի:<br>· <u>Նորատուս</u> - Սեւան-Մարտունի մայրուղուն մոտ գտնվելը, Սեւանի | · <u>Գավառ</u> - բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները, բազմաբնակարան բնակելի շենքերի քայքայված եւ անբարեկարգ վիճակը, հակակարկտային կայանների բացակայությունը, սելավատարի անբարեկարգ վիճակը, քաղաքի բնակչության սոցիալապես անապահով վիճակը:<br>· <u>Գանձակ</u> - ոռոգման համակարգի բացակայությունը, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները, հակակարկտային կայանների բացակայությունը, բնակավայրի բնակչության սոցիալական անապահով վիճակը եւ ցածր կենսապայմանները, գյուղացիական տնտեսությունների արտադրական փոքր կարողությունները, գյուղատնտեսական տեխնիկայի պակասը եւ մաշվածությունը, հանգստի գոտու |

ավազանի մոտ լինելը, պատմամշակութային արժեքների առկայությունը, արտադրական օբեկտներ:

- Սարուխան - Բերրի վարելահողերի առկայությունը, հացի գործարանի առկայություն, պատմամշակութային արժեքների առկայությունը:
- Լանջաղբյուր - Բերրի վարելահողերի առկայությունը, ջրամբարների առկայությունը, պատմամշակութային վայրերը:
- Գեղարքունիք - Բերրի վարելահողերի առկայությունը, ջրամբարին մոտ գտնվելը, ինքնահոս խմելու ջրի առկայությունը, պատմամշակութային հուշարձանների առկայությունը:
- Ծաղկաշեն - Բերրի վարելահողերի առկայությունը, պատմամշակութային վայրերը:
- Կարմիրգյուղ- խմելու ջրի ներքին ցանցի առկայությունը, բերրի վարելահողերի առկայությունը, պատմամշակութային հուշարձանների առկայությունը:
- Հայրավանք - Բերրի վարելահողերի առկայությունը, Սեւան-Մարտունի մայրուղուն մոտ գտնվելը, պատմամշակութային հուշարձանների առկայությունը, Սեւանի ավազանի մոտ լինելը:
- Բերդկունք - Սեւան-Մարտունի մայրուղուն մոտ գտնվելը, Սեւանի ավազանի մոտ լինելը:
- Լճափ - Սեւան-Մարտունի մայրուղուն մոտ գտնվելը, Սեւանի ավազանի մոտ լինելը:
- Ծովազարդ- Սեւան-Մարտունի մայրուղուն մոտ գտնվելը, Սեւանի ավազանի մոտ լինելը, պատմամշակութային հուշարձանների առկայությունը:

բացակայությունը, ջրամբարների քայքայվածությունը, ներբնակավայրային եւ դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը:

- Նորատուս - բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները, մանկապարտեզի եւ գրադարանի շենքերի քայքայված ու անբարեկարգ վիճակը, հանգստի գոտու բացակայությունը, ներբնակավայրային ճանապարհների քայքայված ու անբարեկարգ վիճակը:
- Սարուխան -բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները, հանգստի գոտու բացակայությունը:
- Լանջաղբյուր -բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները, մշակույթի տան եւ մանկապարտեզի քայքայված ու անբարեկարգ վիճակը, խմելու ջրի ներտնտեսային ցանցի քայքայվածությունը, ներբնակավայրային եւ դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը:
- Գեղարքունիք - բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները, մշակույթի տան քայքայված ու անբարեկարգ վիճակը, ներբնակավայրային եւ դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը:
